



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2847

529

U-44

2010

529

Ա-ԿԷ

ՏՈՄԱՐ ԵՒ ՏՕՆԱՅՈՅՑ

401

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հայոց թեմական դպրոցների և հայ եկեղեցւոյ

պաշտօնեաների համար

Աշխատասիրեց

ԳԻՒՏ ԲԵՀՆԵՑ ԲՂԵՆԵՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՍՐՔԱԳՐԱԾ ԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ.



Տ Փ Ի Ի Ս

Տպարան Մ. Հարաձէի, Նիկ., 21.

Тип. М. Шарадзе, Ник., 21.

1894

ԳԻՒՆ Է 50 Կ.

ԳԻՒՏ ԲԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա.

Աղխատութիւնները.

- 1 Աղօթատետր. ք. տպագրութիւն 1889 — 10
- 2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (տպագրութիւն) — 15
- 3 Կրօնի դասագիրք ք. տ. Գ. տպագրութիւն 1891 — 25
- 4 Կրօնի դասագիրք գ. տ. Գ. տպագրութիւն 1890 — 25
- 5 Տոմար և տօնացոյց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ ք. տպագրութիւն 1894 — 50
- 6 Պատի հատուածական օրացոյց ժամանակագրութեամբ Է. տարի 1895 — 60
- 7 Ծոցի օրացոյց, յաւելուածով Է. տարի 1895 — 20
- 8 Կարնոյ գաղթը, պատմական տեսութիւն, 1891 — 10
- 9 Դիւան Հայոց պատմութեան գիշեր Ա. — Բ. 1780—1834. Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 — 2
- 10 Դիւան Հայոց պատմութեան գիրք Գ. Սիմեան կաթողիկոսի յիշատակարանը. կենսագրութիւն, յաւելուածներով և ծանօթութիւններով 1894 — 7

Բ.

Թարգմանութիւնները.

- 11 Հաւատարմութիւնն ամեն արգելքների յաղթում է. Ֆ. Հոֆմանի 1877 — 40
- 12 Խաւարից դէպի լոյս. Ֆ. Հոֆմանի. 1877 — 40

529
Ա-44

ՏՈՄԱՐ ԵՒ ՏՕՆԱՅՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՅՏՈՆԵԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աղխատութիւն

ԳԻՒՏ ԲԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

Երկրորդ սրբագրած տպագրութիւն.



Տ Փ Խ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.
Тип. М. Шарадзе, Ник., 21.
1894

1006
29197

15493

Дозволено цензурою, Тифлисъ, 19-го Августа
1894 года.

002

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ԳԵՐԱՊԵՏԻ

ՏԻՐ ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՕՐՄԱՆԵԱՆԻՆ

Խոնարհաբար նուիրում է

ԱԶԽԱՏԱՍԻՐՈՂԸ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Տ. Տ. ՄԱՐՏՉԻԱ.

ՎԵՐՓԵԼԻ ՆԻ ՍԻՐԵՋՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի վաճառք Չարխախան ա. Աստուածածնի
յԱրմաշ յՃ Եղեմեթի 1889 աթի.

Ծխաւոր երկու մայր եկեղեցւոյն Տփլեաց ար-
ժանաշնորհ Տ. Գիւտ քահանայի Աղանեանց՝ սիրել-
ւոյ ի Բրիտոս եւ դործակցի ի ս. եկեղեցւոյ. ի Տէր
խնդալ.

Ժողովրդական երկասիրութեանց ծեռօք
ժողովրդեան կրթութեան եւ զարգացման օգ-
տակար լինել՝ այդ է անշուշտ Ձեր նպատա-
կը, ինչպէս եւ աշխատասիրութեանցը ցու-
ցակէն ակներեւ է ամեն զննողի: Եթէ քազ-
մահատոր չեն՝ քայց քազմաթիւ են. եթէ
քազմաշխատ չեն՝ քայց քազմօգուտ են. եթէ
քազմահոշակ եւս չեն՝ քայց քազմատեսակ
են. եւ Ձեր արժանայարգ սիրելութիւնը կա-
րող է խղճի անկեղծ գոհունակութեամբ պար-
ծիլ, թէ զիտէ իւր ժամերը նուիրել այնպի-
սի աշխատութեանց՝ որք ժողովրդական շըր-
ջանին մէջ մեծամեծ օգուտներ քերող են ար-
դէն եւ պիտի բերեն շարունակ:

Ձեր կենաց վիճակներուն փոփոխուիլն
կարող եղած է Ձեր աշխատութեանց տե-
սակները փոփոխել, այլ չէ փոփոխած նպա-
տակը, ուստի իբր քարոյավէպերու թարգ-

մանող եւ իբր կրօնական դասագիրքեր ու
երկասիրող, իբր նոր օրացուցի յօրինող եւ
իբր զբական յօդուածներու խմբագրող, եւ
վերջապէս այժմ իբր տոմարի եւ տօնացու-
ցի աշխատասիրող միշտ կարող եղած էք
ցուցնել ի Ձեզ նոյն հեղինակի ոճը եւ նոյն
անձի ոգին:

Տոմարի եւ տօնացուցի ձեռնարկը ըն-
թերցւոյ սիրով եւ ուրախութեամբ, որովհե-
տեւ նոյն իսկ եկեղեցական պաշտօնէից հա-
մար դժուարամատչելի կարծուած հմտու-
թիւնները դիւրուայց կերպով եկեղեցւոյ ման-
կանց ծանօթ եւ ընտանի էք գործած: Վըս-
տահ եղէ՛ք, սիրելիք ի Տէր, որ ծանր եւ
քարձր աշխատութիւններով զիտուններուն
խօսողներէն աւելի արդիւնատր եւ երախ-
տատր են դիւրատար աշխատութիւններով
ժողովուրդին եւ աշակերտին խօսողներն: Շա-
րունակեցէ՛ք Ձեր գեղեցիկ ընթացքին մէջ,
եւ մեր Ուղղափառ եկեղեցւոյն եւ նորա վար-
դապետութեանց եւ պաշտամանց եւ սուրբ
աւանդութեանց վերաբերեալ ուրիշ շատ եւս
կէտերը՝ Ձեզի սեպհական ոճով ու ոգով
մեր քարեպաշտ ժողովրդեան եւ մեր ուսում-
նատենչ մանկտոյն տուէ՛ք ի ճարակ եւ ի
ճաշակ:

Բաղձացող էք իմ անուան ձօնել «Տո-
մար եւ տօնացոյց Հայաստանեայց ս. եկե-
ղեցւոյ» ձեռնարկը: Պատիւ է ինձ առաջարկը,
սակայն այդպիսի նուէրներ Մեկենասներու
են պատշաճ եւ ոչ եկեղեցւոյ խոնարհ պաշ-
տօնէից: Ես եւս ձեզ նման նոյն ասպարէզի
մշակներէն եմ, գործակիցներու պարտաւո-
րութիւնը զիրար պատուել չէ, այլ իրարու
օգնել: Եթէ Ն. Ս. Օ. Վեհափառ Կաթողի-
կոսին հրամանաւ Ս. Էջմիածնայ Հոգեւոր
Ճեմարանին մէջ աստուածաբանական գի-
տութեանց ուսուցչութիւն, եւ Ն. Ա. Ս. քարձ-
քաշնորհ Պատրիարքի հրամանաւ Արմաշու
եկեղեցական վարժարանի տեսչութեան պաշ-
տօններս պատուել ի նկատի ունիք, իբր
կրօնուայցներու խմբին անդամակից, պա-
տին անոնց է որ իմ առջեւ ասպարէզ քա-
նալ քարեհաճեցան: Աստուած Ձեզի եւ քո-
լոր կրօնուայցներու եւ ինձ յաջողութիւն
պարգեւէ իւր օրհնեալ կամօք:

Ի համբոյր սրբութեան և ի սէր սրտեռանդն
մնամ արժանապատիւ սիրելի թեանդ աղօթակից

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐԾԱՆԵՆՆ

ԱՁԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԵՐՐՈՒԹԵԱՆ

Մարդս ժամանակի հետ կապուած լինելով, ամենայն անհատ ժամանակի փոփոխութեան հաշիւներով պէտք ունի հետաքրքրուելու և այս պատճառով ամեն թէ հին և թէ նոր ազգեր հետամուտ են եղել ժամանակի ճիշտ չափերը որոշելու և մի որ և է հաստատուն կարգի վերածելու. այդ հաշիւները կոչուում էին տոմարական հաշիւներ:

Հայերն էլ, բնականաբար, նոյն շաւղին են հետևել և տոմարը մեր մէջ էլ իւր ամենահին գործածութիւնն է ունեցել. ինչպէս մեր մատենագիրները աւանդում են տակաւին Հայկի ժամանակ այդ արուեստը գոյութիւն ունէր և այնտեղից սկսուող տոմարական մի մեծ շրջան մինչև այս օրս գոյութիւն ունի-դա Հայկայ հին թուականն է: Այդ հաշիւները ժամանակի ընթացքում, հազարաւոր տարիներ անցնելուց յետոյ՝ զանազան բարեփոխութեան ենթարկուեցան և այսօր այնպիսի մի որոշ կերպարանափոխութիւն է ստացած, որ կարողանում ենք որոշել ժամանակի ամենամանջան փոփոխումներն ու յաջորդութիւն-

ները և ժամանակի հետ կապուած մեր բոլոր տօները անվրէպ կատարել:

Տոմարական հաշիւները այնքան գրաւել էին մեր զանազան ժամանակի գրողներին՝ որ մեզ հասած բազմաթիւ գրչագիր աշխատութիւններից մի մեծ մասը այդ նիւթին է վերաբերում. սակայն ամենքը կը խոստովանին, որ դոցանից ոչ մէկը այնպէս պարզ և ամփոփ բովանդակութիւն չուներ, որ ցանկացողը կարողանայ տոմարական բոլոր գիտելիքներին ծանօթանալ նոցանով:

Այդ հանգամանքը մի կողմից, և միւս կողմից այն անհրաժեշտ պահանջը, որ ունին մեր թեմական դպրոցները տոմարի դասագրքի պակասութեան պատճառով, ստիպեցին ինձ կազմել այս համառօտ դասագիրքը:

Սոյն դասագիրքը կազմելիս ի նկատի եմ ունեցել մեր հին ու նոր բոլոր տոմարագիրների մի գլխաւոր պակասութիւնը. այն է որ սովորաբար նոքա տալիս են բազմաթիւ երկար ու ձիգ աղիւսակներ այս ու այն անյայտը գտնելու համար՝ առանց կանոնը բացատրելու նոցա. աչքի առջև ունենալով, որ կանոն գիտեցողը միշտ կարող է աղիւսակներ կազմել, իսկ առանց կանոնի աղիւսակ իմացողը, մի անգամ եթէ այս վերջինը կորցնէ՝ իսպառ զրկւում է անյայտը գտնելու կարողութիւնից՝ ես ամեն դէպքում աշխատել եմ

տալ կանոնները և ոչ թէ աղիւսակները. կանոն գիտեցողը արդէն կարող է ինքը աղիւսակ կազմել:

Այս դասագիրքը կազմելիս աչքի առջև ունեցել եմ բազմաթիւ հայերէն և օտար լեզուով տոմարի և աստղաբաշխութեան վերաբերեալ աշխատութիւններ, որոնցից գլխաւորները նշանակում եմ այստեղ:

ԳԻՒՏ ԲԵՆԵՐԵՑ ԵՂԵՆԵՆԵՑ:

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

„Արեւելք“ լրագրի 1890 թ. օգոստոսի համարներէն մեկում „Տիրայր“ աստղագրութեամբ մի քննադատութիւն լոյս տեսաւ այս դասագրքի մասին, որ աննշան յայտարարեալ առաջ եկք յերոտմ այստեղ:

ՏՈՄԱՐ ԵՒ ՏՕՆԵՑՈՅՑ

Նոր ձեռնարկ կամ դասագիրք մըն է, որոյ նիւթն ալ բոլորովին նոր լինելով կ'արժէ վրան տեսութիւն մը բնել:

Էր ժամանակ մը՝ յորում դպրոցական ուսումը ըստաճը, սոսկ լեզուի ձիւղով կ'ըլբաղէր: Նախ անհատնում ընթերցանութիւն մը, բերական, հեգարան, Սաղմոս, Աւետարան, կտակարան, ժամագիրք և նարեկ: Վերջէն աւելի անհատ-

նում բերականութիւն մը, համառօտէն ընդարձակին և ընդարձակագունին անցնելով, շատ անիմանայի կանոններ գոց ընելով, և անթիւ քաղուածներ կրկնելով:

Անցան այդ ժամանակները, և դպրոցաց մէջ սկսաւ հմտութեանց ժամանակը, յորում կ'աշխատիմք ամեն տեսակ գիտելեաց վրայ տեղեկութիւն և ծանօթութիւն հաղորդել աշակերտաց, և ինչ որ նոցա կենաց հետ կապ ունի, կամ նոցա աչքին կամ ականջին առարկայ կըլինի, պատշաճ կերպով ծանօթացնել, տրուած տեղեկութիւնները յարմարելով և համեմատելով աշակերտին զարգացման: Աստղաբաշխութիւնն և բրնագիտութիւնն ալ իրենց բարձրացած ամօռներէն իջան, և մանկական կրթութեան մէջ մաս մը ստացան իրենց ամենատարրական ծանօթութիւններով:

Վրոնքը ոչ միայն նախապատիւ է իւր նիւթին բարձրութեամբ, այլ է իւր նիւթին կարեւորութեամբ. պէտք էր ուրեմն որ կրօնքն ալ մեր դպրոցական ուսման նոր ձեւերուն ենթարկուէր, և բարձրապատիւ Աստուածաբանութիւնն ալ իւր գերազանց կայքէն խոնարհելով, դիւրատար ոճով մը մանկական հասակին տանելի դառնայր: Պէտք էր որ անիմանալի բացատրութիւններով ի բերան սերտուած Քրիստոնէական վարդապետութեան տեղ, միտքին վրայ ազդող և սրտին վրայ ներգործող կրօնի ուսումը ընդունուէր դպրոցներու մէջ:

Այսօր, մի նոր դասագիրքի առթիւ, պատենհութիւն կ'ընծայուի ինձ խօսիլ կրօնի պաշտա-

մանց և արարողութեանց վրայ, և այդ պատե-
հութիւնը կ'ընծայէ Տփղիսու Մայր եկեղեցւոյ
ծխատէր երէցներէն Արժ. Տ. Գիւտ քահանայ Ա.
ղանեանց: Այստեղ ներուի ինձ փոքրիկ դիտողու-
թիւն մը ի պատիւ քահանայական դասուն Տրփ-
ղիսու, յորում սկսած են երեւիլ ուսմամբ և զար-
գացմամբ փայլուն անհատներ, որք և գրաւոր եր-
կասիրութեամբ օգտակար կ'ըլլին դաստիարա-
կութեան գործոյն, և մանաւանդ կրօնական և
եկեղեցական դաստիարակութեան: Տ. Գիւտ Ա.
ղանեանց արդէն ծանօթ է շարք մը հրատարա-
կութիւններով և Տփղիսու հանդէսներու մէջ ու-
սումնասիրական յօդուածներով:

Կրօնը, ինչպէս կ'ըսէինք բարոյական և վար-
դապետական մասէն դատ, պաշտամանց և արա-
րողութեանց մաս մը ունի, որ ամեն հաւատա-
ցելոյն համար ամենէն ընտանի մասն է, բանի
որ պէտք է ընդհարի անոր ամեն անգամ որ ե-
կեղեցի կ'ըմտնէ, կամ կրօնական պաշտօն մը կա-
տարելու կը պարտաւորուի: Երբ օր կ'ըհամրէ, երբ
տօն մը կ'ըկատարէ, երբ հանդէս մը ունի, միշտ
եկեղեցական տեղեկութիւններու կ'ըկարօտի. հայ
հաւատացելոյն հնար չէ նոյն իսկ կանոնաւոր ըն-
տանեկան կենցաղ ունենալ, առանց իւր տօնա-
ցուցին և տոմարին վրայ փոքր ի շատէ տեղեկու-
թիւն մը ունենալու: Այսու հանդերձ տօնացոյ-
ցը անմերձենալի և տոմարագիտութիւնը անի-
մանալի բան մը սեպուած է հոսարակ ժողովըր-
դեան, վասն զի ոչ ուրեք խորհուած է նախնա-
կան դաստիարակութեան մէջ փոքրիկ մաս մըն

ալ նուիրել այդ անհրաժեշտ հմտութեան: Մին-
չև իսկ եկեղեցական պաշտօնեայք իրենց մասնա-
գիտական ուսմանց մէջ չեն ստացած, եկեղեցւոյ
պաշտամանց և արարողութեանց վրայ դպրոցա-
կան ոճով աւանդեալ և կարճաօտեալ հմտու-
թիւն մը, թէպէտ տօնացոյցն ու յայտմաւորքը,
մաշտոցն ու ճաշոցը շարունակ ձեռուընին ունին:

Եկեղեցւոյ ծիսական հմտութիւնները իբր
առանձին նիւթ ընդունուեցան Ս. Էջմիածնի ձե-
մարանին մէջ Վեհափառ կաթողիկոսի կարգա-
դրութեամբ, 1888-ին. նոյնին կարգադրութիւնը
սկսաւ անցեալ տարին Արմաշու Գպրեղանուց մէջ,
ուր տօնք և ծէսք Հայաստանեայց եկեղեցւոյ,
անունով և չորս տարւոյ ընթացքով դաս մը հաս-
տատուած է, որ պիտի բովանդակէ մեր եկեղեց-
ւոյն պաշտամանց և արարողութեանց վերաբե-
րեալ բոլոր կէտերը:

Արժ. Աղանեանց կանխած է իւր հրատա-
րակութեամբ այդ ճիւղին մշակութիւնը. և թե-
մական դպրոցներու և եկեղեցւոյ պաշտօնէից
դիւրութեան համար, համառօտ ձեռնարկ մը
հրատարակած է Տոմար և Տօնացոյց անուամբ,
և երկու մասերու բաժնուած, երկու անուննե-
րու համաձայն: Առաջին մասը կը պարունակէ
տոմարագիտութիւն կոչուած ուսումը. իսկ երկ-
րորդ մասը տօնացուցի կարգադրութիւնները, որք
ուսման տեսակէտով անուն մը չունին տակաւին:
Պարունակութիւնը ամենածանօթ նիւթերու վրայ
է, սակայն նորութիւնը՝ ծանօթ նիւթերը դրպ-
րոցական ձևի վերածելն է:

Արժ. Աղանեանց ծանօթ է գրական աշխարհին իւր օգտակար հրատարակութիւններով, և իրեն նպատակ ունենալով ժողովրդական պիտոյից համեմատեալ և ժողովրդական ընթերցողաց չափեալ, կամ թէ դպրոցական աշակերտաց յարմարեալ երկասիրութիւններ յօրինել, իւրբազմակողմանի հմտութեամբ և իւր անխոնջ գործունէութեամբ ցարդ տասնիկնց կտոր երկասիրութիւններ հրատարակած է, և քանի հատ ալ ձեռաց տակ աշխատութիւններ ունի, որոց գլխաւորն է ժամանակակից պատմութեան նիւթերու հարուստ հաւաքածոյն, որ յուսամբ թէ ի մօտոյ յաջողի աւարտել և ի լոյս ընծայել:

Բայց մէք դառնամք առաջարկեալ դասագիրքին:

Ինչպէս կրօնի դասատուութիւնն անհրաժեշտ է ամեն կարգի աշակերտաց իւր բարոյական և վարդապետական տեսակէտով, նոյնպէս ալ անհրաժեշտ պէտք է նկատուի պաշտամանց մասը, զի միևնոյն նիւթի լրացուցիչ մասը կը կազմէ, և եթէ ամբողջական մի նիւթ պիտի աւանդեմք, հնար չէ լրացուցիչ մասերը զանց ընել:

Ուստի ջերմապէս կը յանձնարարեմք ոչ միայն թեմական դպրոցաց, այլ և ամեն թաղակա, կամ ծխական վարժարանաց, որ գոնէ իրենց բարձրագոյն դասերուն աւանդեն այդ նիւթը, առաջ նորդ ունենալով Արժ. Աղանեանցի դիւրուսոյց և դիւրատար դասագիրքն, որ իւր 59 երեսներուն մէջ բաղմակողմանի հմտութիւններ կը պարունակէ, և նիւթին հմուտ դասատուի մը ձեռք շա-

բաթական մի ժամով մի տարուան ընթացք միայն կը կազմէ:

Կը յանձնարարեմք ևս եկեղեցւոյ պաշտօնէից, որ Արժ. Աղանեանցի գիրքը ուսումնասիրեն, ուստի մեծապէս դիւրութիւններ պիտի քաղեն եկեղեցական և տոմարական հաշուոց համար:

Անցողաբար յիշատակեմք կիրակի պահելու օրերու ցուցակը, որոյ վրայ վերջի ատենները խնդիր յուղեցեալ ժողովրդեան մէջ:

Սիմոն Կաթուղիկոս տօնացուցի բարենորոգման առթիւ 21 օր որոշած էր ըսելով թէ պարտիք կիւրակէ գիտել և պահել բաց ի բնական կիւրակէ օրերէ: Այդ 21 օրերն են. 1—3 Ծննդեան առաջին և երկրորդ և ութերորդ օրերը, 4. Տեառնընդառաջ, 5. Աւետում, 6. Համբարձում, 7. Աւագ հինգշաբթի, 8—11. Չատկի և Վարդափառի և Աստուածածնի և Խաչի երկուշաբթիները, 12—14. Աստուածածնայ երեք տօները, Ծննդեան, Ընծայման և Յղութեան, 15. Հրեշտակապետաց տօնը, 16—17. Բարթուղիմէոսի և Թադէոսի երկու տօները, 18—20. Լուսաւորչի երեք տօները, 21. Ամենայն սրբոց տօնը:

Հին տօնացոյցներն այդպիսի խրատ չունէին. իսկ Սիմէոնեան տօնացոյցի երուսաղիմայ և Կոստանդնուպոլսոյ տպագրութիւնք այդ խրատը փոփոխելով, կիրակի տօնելու օրերը 16 միայն ըրած են, որք են. 1—3. Ծննդեան առաջին, երկրորդ և ութերորդ օրեր, 4. Տեառնընդառաջ, 5. Աւագ հինգշաբթի, 6—7. Չատկի երկուշաբթի և երեքշաբթի, 8. Աւետում, 9. Համբարձում, 10. Գիւտ

Նշխարաց Լուսաւորչի, 11—13. Վարդավառի,
Աստուածածնի և խաչի երկուշաբթիներ, 14—16.
Աստուածածնայ երեք տօներ:

Ճիսկ յոմանս տեղիս սովոր են կիրակէ պա-
հել: Ծանօթութեամբ իբրեւ կամաւոր թողուած
են միւս հինգերը, որք են. 1. Հրեշտակապետաց
տօնը, 2—3. Բարթողիմէոսի և և Թագէոսի եր-
կու տօները, 4—5. Լուսաւորչի միւս երկու տօ-
ները:

Արժ. Աղանեանցի ցուցակին մէջ կիրակէ
տօնելու օրերը, 23 են նշանակուած:

Սիմէօնեան ցուցակէն կը պակսի Ամենայն սըր-
բոց տօնը. իսկ աւելցած են. 1. Զատիկի երեք-
շաբթին, 2. Վարդանանց տօնը, 3. Սահակայ և
Մեսրոպայ տօնը: Արժ. Աղանեանց իւր գիրքը
Վեհ. Կաթողիկոսի հաստատութեան ենթարկած
է, և այդ ցուցակին վրայ յատուկ հրաման խնդ-
րած և այնպէս հրատարակած է:

Այլ մեր գիտեմք թէ ոչ միայն մեր, այլ և ա-
մեն եկեղեցիներու մէջ կիրակէ պահելու սովո-
րութիւնը տարբեր է տարբեր երկիրներու մէջ,
ուստի և Ռուսահայոց և Տաճկահայոց մէջ ալ
տարբերութիւն գտնուիլը, լոկ տեղական սովո-
րութեանց հետեւանք է:

Գ Ր Ը Կ Ը Ն Ո Ւ Թ Ի Ի Ն:

1. Տօնացոյց Հայաստանեայ ս. եկեղեցւոյ:
2. Սիւրմէլեան. տոմարագիտութիւն ընդ-հանուր եկեղ.
քաղաք. Վենետիկ, 1818:
3. Այլ և այլ գրչագիր տոմարագրքեր:
4. Ալիշան. Յուշիկը հայրենեաց Հայոց. Վեն. 1869.
5. Խապայենց. տիեզերագրութիւն. Երուս.
6. Տարբեր ժամանակագրութեան. Վեն. 1857.
7. Սիմէօնեանց Մ. տիեզերագրութիւն (անտիպ):
8. Ղազարոսեան. տիեզերական տարեցոյց. 1873
Կ. Պօլիս:
9. Էֆիմէրտէ:
10. Տոմար կամ օրացոյց ընտանեկան. Վիեննա. 1858
և 1859:
11. Օրացոյց. Թէոդոսիա. 1870:
12. Араго. Общепонятная астрономія 4 т. С. П. Б.
13. Малининъ. Космография.
14. Չամչեան. պատմութիւն Հայոց Վենետ. 1784.

1006
2918

Յ Ա Ն Կ.

Ա.

Տ Ո Մ Ա Ր.

Ա. Տոմար կամ Ժամանակագրութիւն.

Բ. Տոմարի սկիզբը.

Գ. Ժամանակ.

ա. Դար.

ը. Տարի.

զ. Աթիս.

դ. Եօթներեակ և օր.

ւ. Ժամ, րոպէ և մանրերկրորդ.

Դ. Յուլեան տոմար.

Ե. Գրիգորեան տոմար.

Զ. Հայկական տոմար.

ա. Հայկայ թուական և Հայկայ շրջան.

ը. Հայոց լուսաւորութեան թուական.

զ. Տոմարեան թուական.

դ. Սարկաւազադի կարգ:

ւ. Փոքր կամ Ազարիայի թուական.

զ. Փրկչական թուական.

Է. Շրջան.

ա. Լուսնի շրջան — իննևասներեակ կամ ոսկեգիր.

ը. Արևի շրջան — վերադիր.

Ը. Եօթներեակ.

Թ. Կրկնակ.

Ժ. Վերադիր գործածութիւնը — լուսնի ծնունդը, լրումը և օրերը գտնելը.

Բ.

ՏՕՆԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ.

ԺԱ. Զատիկի տօնը.

ա. Զատիկը.

ը. Զատիկան լուսինը և Զատիկի տօնի սահմանը.

ԺԲ. Տարեգիր.

ԺԳ. Տարեգրով Զատիկը գտնելու կանոնը.

ԺԴ. Տարեգիր գտնելու կանոնը.

ԺԵ. Հինգհարիւրեկի շրջան.

ԺԶ. Մշտնջենական աղիւսակ.

ԺԷ. Պարզատոմարական աղիւսակ.

ԺԸ. Հայոց եկեղեցական տօնացոյց.

ա. Տօները.

ը. Պասերը.

զ. Միջոց ուտիքներ.

դ. Տօնացուցի ամբողջութիւնը.

ւ. Շարժական, տէրունական և այլ տօների գտնելու կանոնները.

զ. Կիւրակի պահելու օրերը:

է. Եկեղեցական ձայները.

ը. Ձայնգիւտ.

ԺԹ. Յաւելուած: Ցուցակներ. —

ա. Լուսնի աւագ լրման:

ը. Ամսամուտը գտնելու.

զ. Զատիկ-կիւրակէի.

դ. Ձայնգիւտի.

ւ. 532 ամեայ-մեծ շրջանի.

զ. Պարզատոմարի.

է. Տարեգիրներ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՏՈՄԱՐ

Ա.

ՏՈՄԱՐ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տոմար կամ ժամանակագրութիւն նշանակում է ժամանակի վերայ տեղեկութիւն կամ ժամանակ չափելու արուեստ: Իսկ տոմարագիտութիւնը այն գիտութիւնն է, որ ցոյց է տալիս ժամանակի այլ և այլ փոփոխութիւնները:

Բ.

ՏՈՄԱՐԻ ՍԿԻՋԲԸ

Տոմարագիտութեան ուսումը շատ հին է և ամեն հին ազգեր ունեցել են տոմարի գործածութիւնը միմեանցից շատ կամ քիչ տարբերութեամբ, ասկայն՝ պատմութիւնից ճիշտ չէ իմացուում, թէ երբ և ո՞րտեղ է սկիզբն

առել դա: Հին ազգերից Հայերի, Բաբելացի-
ների, Եգիպտացիների, Մարաց, Պարսիկների,
Յոյների, Հռովմայեցիների և Հրէաների մէջ
շատ վաղուց երևում է տոմարի գործածու-
թիւնը միմեանցից տարբեր կերպով, բայց թէ
սոցանից որն է առաջ սկսել ժամանակը չա-
փել՝ յայտնի չէ:

Ամենից հին տեղեկութիւնը, որ ցոյց է
տալիս տոմարի գործածութիւնը, մենք գրա-
նում ենք Սուրբ Գրքի մէջ, որից երևում է
թէ տոմարի գործածութիւնը Հրէից մէջ սկիզբն
է առել Մովսէս մարգարէի ժամանակ 1487
տարի Քրիստոսից առաջ, երբ Մովսէս մար-
գարէն պատուիրեց Հրէից Զատիկի կամ Պասե-
քի տօնը կատարել, այն է նոցա Եգիպտոսից
գուրս գալու ազատութեան յիշատակը: Մով-
սէսից սկզբնաւորած հրէական տոմարը նո-
րանից 600 տարի յետոյ Եգրասը նորոգեց:

Գ.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ժամանակը մի ականթարթից մինչև բիւ-
րաւոր տարիների միջոցն է, որ մարդիկ բնա-
կանապէս 24 ժամուան միջոցի վերայ բաժա-

նեցին՝ լուսի և խաւարի փոփոխակի յաջոր-
դութեան պատճառով: Ժամանակի սկիզբը,
ինչպէս գիտենք Սուրբ Գրքից, աշխարհիս
ստեղծման առաջին օրիցն է հաշւում, իսկ ա-
րեգակի և լուսնի ընթացքը չորրորդ օրը ո-
րոշուեցաւ:

Ժամանակը սովորաբար երկու է բաժան-
ւում. — ա. *ընական* և բ. *արուեստական*:
Բնական բաժանմունքներն են՝ տարին, ամիս
և օրը, որոնք երկնային մարմինների երե-
ւոյթներով են չափւում, իսկ արուեստական
բաժանմունքներն են՝ դար, թուական, ժամ,
րոպէ, մանրերկրորդ, այսինքն ժամանակի
այն չափերը, որոնք արհեստապէս են առաջ
եկած և որոնք ուղղակի կապ չունին երկնա-
յին մարմինների երևոյթների հետ:

Տարին զանազան ազգերից ոմանք երկ-
րի մի ամբողջ պտոյտն էին համարում արեւի
շուրջը, իսկ միւսները լուսնի տարեկան շըր-
ջանի ժամանակամիջոցը:

Ամիսը հաշւում էր լուսնի մէկ ծնուն-
դից մինչև միւսը:

Շաբաթը լուսնի մէկ քառորդից մինչև
միւսը:

Օրը արեւի ծագելուց մինչև միւս արեւա-
ծագը կամ մէկ արեւամտից մինչև միւսը:

Ժամը գիշերուայ ու ցերեկուայ որոշ մասերի բաժանմունքն է:

Րոպէն ու ակն/ծար/ծը իւրաքանչիւր ժամը բաժանելու չափեր են:

Ա. Դ ա ը.

Դարը հարիւր տարուայ շրջան է: Դար է կոչուում նաև հազար տարուան միջոցը:

Նմանապէս մեծ գէպքերի ժամանակամիջոցներն էլ կոչուում են դար, ինչպէս որ աշխարհիս ստեղծագործութիւնից մինչև ջրհեղեղը եղած միջոցը (1655 տարի) կոչուում է առաջին դար, ջրհեղեղից մինչև Քրիստոսի ծնունդը՝ երկրորդ դար, և Քրիստոսից մինչև աշխարհիս վերջը՝ երրորդ դար:

Բ. Տ ա ը ի.

Տարին ժամանակի գլխաւոր բաժանմունքն է, որ տասներկու ամսուան շրջան ունի և այդքան ժամանակի մէջ երկիրը մի պտոյտ է անում արեգակի շուրջը, այնպէս որ մի տարեգլխին երկիրը ինչ կէտից որ սկսել էր իւր պտոյտը, միւս տարեգլխին նոյն միջոցին լինում է միևնոյն տեղում:

Տարին երկու տեսակ է լինում. — ա. արեգակնային կամ քնական և բ. քաղաքական տարի:

ա. Արեգակնային տարին այն է, որ երկիրս 12 ամսի կամ 365 օրուայ, 5 ժամուան, 48 րոպէի և 50 մանրերկրորդի (և 6 մանրերրորդի) շրջանում արեւի չորս կողմը պտոյտ գալով՝ դառնում է իւր առանցքի վերայ:

բ. Քաղաքական այն տարին է, որ սովորաբար ամեն ազգ և տէրութիւն գործ են դնում, որի հաշիւը ամբողջ օրերով է լինում, առանց ժամերի ու մանրերկրորդների և այդ աւելորդ ժամերն ու մանրերկրորդները հաւաքուելով չորս տարին մի անգամ մի ամբողջ օր են կազմում, որ աւելացնելով հասարակ տարու 365 օրերի վերայ՝ չորս տարուց մէկը 366 օր են հաշուում և այդ տարին կոչուում է նահանջ:

Ուրեմն քաղաքական տարին բնական տարուց վեց ժամի չափ կարճ է. և այդ երկու տարիները հաւասարեցնելու համար է, որ քաղաքական տարին չորս տարին մի անգամ նահանջ ենք անում:

Բացի արեգակնային տարուց կայ նաև

լուսնական տարի, որ լուսնի 12 անգամ իւր ընթացքը կատարելու միջոցն է:

Լուսնական տարին էլ երեք տեսակ է լինում.

ա. Աստղաբաշխական, որ 354 օր, 8 ժամ, 48 րոպէ և 30 մանրերկրորդ ունի: Այսքան ժամանակի ընթացքում լուսինը պըտտում է արևի շուրջը:

բ. Քաղաքական, որ 354 օր ունի:

գ. Նահանջ, որ տասներեք ամիս ունի կամ 384 օր:

Գ. Ա մ ի ս.

Տարուայ գլխաւոր բաժանմունքը ամիսն է. առհասարակ ամեն ազգերի մէջ տարին տասներկու ամիս ունի և այս բաժանմունքը նախնի ժողովրդներից է մնացած: Ամսի գործածութիւնը ամենից առաջ լուսնի երևոյթից առաջացաւ. մարդիկ տեսնելով որ լուսինը մի անգամ ծնուելով և իւր շրջանը կանոնաւոր կատարելով դարձեալ ծնւում է, այդտեղից արդէն սկսեցին լուսնական ամիս գործածել. իսկ բաւական ժամանակից յետոյ սկսեցին նաև արեգակնային ամիս գործածել:

Ամիսը երկու է բաժանւում. — Ա. աստ-

ղաբաշխական կամ ընական եւ Բ. քաղաքական:

Ա. Աստղաբաշխական կամ բնական ամիսը այն է, որ չափւում է երկրի կամ լուսնի շարժողութեամբը, վասնորոյ աստղաբաշխական ամիսն էլ բաժանւում է երկու — արեգակնային և լուսնական:

ա. Արեգակնային ամիս ասւում է այն ժամանակամիջոցը, երբ երկիրը Համաստեղութեան մէկ կենդանակերպից հասնում է մինչև միւսը. և որովհետև երկիրը արևի շուրջը պտտում է. կամ որ նոյն է, երկիրը Համաստեղութեան տասներկու կենդանակերպի առջևով անցնում է 365 օրուայ, 5 ժամուայ, 48 րոպէի և 50 մանրերկրորդի (և 6 մանրերկրորդի) ընթացքում, ուստի այդքան միջոցը տասներկու մաս բաժնելով գտնում ենք, որ մի ամիսը ունի 30 օր 10 ժամ 29 րոպէ և 4 մանրերկրորդ:

բ. Լուսնական ամիս կոչւում է այն միջոցը, երբ լուսինը երկրիս շուրջը մի պտույտ է անում, և ունի ճիշտ 29 օր, 12 ժամ, 44 րոպէ, և 3 մանրերկրորդ:

Բ. Իսկ քաղաքական ամիսը, ինչպէս և քաղաքական տարին էր, ամբողջ օրերով ենք

Հաշուամ առանց ժամերն ու մանրերկրորդներն հաշուի առնելու:

Յուլեան տարուան ամիսներ.

1. Յունուար	31 օր.
2. Փետրուար	28 — (29)
3. Մարտ	31 —
4. Ապրիլ	30 —
5. Մայիս	31 —
6. Յունիս	30 —
7. Յուլիս	31 —
8. Օգոստոս	31 —
9. Սեպտեմբեր	30 —
10. Հոկտեմբեր	31 —
11. Նոյեմբեր	30 —
12. Դեկտեմբեր	31 —

Գրիգորեան տարուան ամիսները նոյնն են, միայն 12 օր առաջ են սկսում Յուլեան տարուայ ամիսներէից:

Հայոց ամիսներ.

1. Նաւասարդ	30 օր.
2. Հոռի	30 —
3. Սահմի	30 —

4. Տրէ	30 —
5. Քաղոց	30 —
6. Արաց	30 —
7. Մեհեկան	30 —
8. Արեգ	30 —
9. Ահեկան	30 —
10. Մարերի	30 —
11. Մարգաց	30 —
12. Հրոտից	30 —
13. Աւելեաց	5 — (6):

Ազարիայի ամիսների անուններ.

1. Շամս.	7. Թիրայ.
2. Ադամ.	8. Դամայ.
3. Շբաթ.	9. Համիրայ.
4. Նախայ.	10. Արամ.
5. Ղամար.	11. Ովղան.
6. Նադար.	12. Նիրհան.

13. Աւելեաց.

Սոցա օրերի որքանութիւնը նոյն է, ինչ որ Հայոց ամիսներինը:

Դ. Եօթնեակ եւ օր.

Ա. Ամիսը չորս մասն է բաժանուում, որի ամեն մէկ մասը կոչուում է շաբաթ կամ եօթնեակ, որովհետեւ ամեն մէկ մասը եօթն օր է:

Եօթնեակը ոմանք լուսնի եօթնօրեայ փոփոխութիւնից առաջ եկած են համարում, իսկ ոմանք էլ աշխարհիս եօթնօրեայ արարչութիւնից:

Գրեթէ բոլոր ազգերի մէջ գործ է ածւում եօթնեակը. Հայերն էլ անյիշատակ ժամանակներից գործ են ածում նոյնը. բայց յայտնի չէ թէ սկզբում ինչ անուններ էին տալիս հայերը շաբաթուայ օրերին, սակայն ենթադրւում է, որ հին հեթանոսութեան ժամանակ Հռովմայեցոց և Յունաց քսպէս եօթն մոլորակների անուններով են կնքուած եղել շաբաթուայ օրերը. իսկ այնուհետև Հրէից շաբաթուայ անունները ընդունեցին, միայն միաշաբաթի տեղ կիրակի (որ Յունարէն տէրունական է նշանակում) և պարասկելի տեղ ուրբաթ (որ Արաբերէն կամ Ասորերէն նշանակում է պատրաստութիւն) վերակոչելով նոյն օրերը:

Ահա մեր հին հեթանոսական և ներկայ անունները զուգընթաց զաստորութեամբ:

1. Կիրակի — Արեգակ
2. Երկուշաբթի — Լուսին
3. Երեքշաբթի — Հրատ
4. Չորեքշաբթի — Փայլածու
5. Հինգշաբթի — Լուսնթագ

6. Ուրբաթ — Լուսաբեր

7. Շաբաթ — Երևակ

Բ. Օր ասւում է այն միջոցը, երբ երկիրը մի ամբողջ պտոյտ է անում իւրառանցքի շուրջը, որ լինում է ճիշտ 24 ժամուան ընթացքում:

Օրը երկու կերպ է մտածւում. ա. Աստղաշխական կամ քնական և բ. արեւատական:

ա. Աստղաբաշխական կոչւում է օրը 24 ժամ հաշուելով, այն է գիշեր և ցերեկ միասին առած և այդ օրը երկրիս ամեն կողմերը միակերպ անփոփոխ է լինում:

բ. Իսկ արեւատական կոչւում է օրուայ այն մասը, որ տւում է արեւի ծագելուց մինչև մայր մտնելը. և սա երկրիս այլ և այլ կողմերը և տարուայ զանազան եղանակներին երկարում է կամ կարճանում: Սիայն տարին երկու անգամ գիշեր և ցերեկ հաւասար են լինում (գարնան ու աշնան գիշերահաւասար):

Օրը իւրաքանչիւր ազգ մի որոշեալ կէտից է սկսում: Այսպէս՝ ա. արեւելեան ազգերից շատերը, ինչպէս՝ արեւացիներ, Պարսիկներ, Ասորիներ, Յոյներ և ուրիշ ազգեր արեւը ծագելուց էին սկսում օրը հաշուել: Բ. Հին Աթենացիներ, Հայերը, Հրէաները, Բոհեմացի-

ներ, Սիլէզացիներ, Չինները, Տաճիկները և իտալական մի քանի նահանգներ՝ արեւիմայր մոնոնելուց, ինչպէս որ Աստուած հրամայել էր Հրէից. — «Յերեկորեայ մինչև ցերեկոյն շաբաթացուցիք գշաբաթս Զեր» (Դևտ. ԻԳ. 32.):

Այս պատճառով հրէայք իրանց շաբաթը ուրբաթ երեկոյից են սկսում, իսկ հայերի մէջ էլ այդ սովորութիւնը մնաց. այնպէս որ մեծ տօների նախընթաց երեկոները նախատօնակ ենք կատարում եկեղեցիներում. այդ երեկոն համարելով հետևեալ օրուան մի մասը: Գ. Արաբացիներ և այժմեան աստղաբաշխները՝ կէս օրից են հաշուում. և Դ. Եգիպտացիներ հին Հռովմայեցիներ և այժմեան արևմտեան ազգերի մեծ մասը՝ կէս գիշերից:

Ե. Ժամ, ըստ էւ մանրերկրորդ.

Ա. Ժամը բնական օրուայ քսան և չորսերորդ մասն է: Հայոց մէջ օրը՝ 24 հաւասար մաս բաժանելու սովորութիւնը շատ հին է. որովհետև մեր անհամար գրչադիր տոմարագրքերի մէջ տեսնում ենք, որ այն իշատակ ժամանակներից օրուան 24 ժամերին այլ և այլ բուն հայկական անուններ են տուած՝ արեւածագից սկսելով:

Յերեկուայ ժամերի անունները.

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1. Այգ. | 7. Շանթակող. |
| 2. Ծայգ. | 8. Հրակաթ. |
| 3. Զայրացեալ (ծայրացեալ). | 9. Հուրփայլեալ. |
| 4. Ճառագայթեալ. | 10. Թաղաթեալ (թաղանթեալ). |
| 5. Շառաւիղեալ. | 11. Առաղօտ. |
| 6. Երկրատես. | 12. Արփող. |

Գիշերուայ ժամերի անունները.

- | | |
|---------------|----------------|
| 1. Խաւարակ. | 7. Խօթափեալ. |
| 2. Աղջամուղջ. | 8. Գիգակ. |
| 3. Մթացեալ. | 9. Լուսաճեմ. |
| 4. Շաղաւօտ. | 10. Առաւօտ. |
| 5. Կամաւօտ. | 11. Լուսափայլ. |
| 6. Բաւական. | 12. Փայլածու. |

Հռովմայեցիներ, Հրէաներ, Յոյներ ու Հայերն օրուան ժամերը երկու մասն էին բաժանում՝ ցերեկուայ և գիշերուայ: Յերեկուան ժամերը չորս մասն էին բաժանում, իւրաքանչիւրը երեք երեք ժամ, որոնց անունում էին առաջին ժամ (արեւածագից սկսելով) 12, 1, 2. երրորդ ժամ 3, 4, 5. Վեցերորդ ժամ 6, 7, 8. և իններորդ ժամ 9, 10 և 11 ժամերը:

Գիշերուան ժամերն էլ չորս մասն էր բաժանուում, երեք երեք ժամ, որոնք կոչուում էին— առաջին պահ 12, 1, 2. երկրորդ պահ, 3, 4, 5, երրորդ պահ 6, 7, 8, և չորրորդ պահ 9, 10, և 11: (Մատթ. ԺԳ. 25: Մարկ. Ծ. 48.):

Բ. Մի ժամը ունի 60 րոպէ կամ վայրկեան և մի րոպէն 60 մանրերկրորդ (կամ երկրորդական վայրկեան և կամ ակնթարթ). իւրաքանչիւր մանրերկրորդ էլ բաժանուում է 60 մանրերրորդ մասերի և այս վերջին չափը գործ է դրուում միայն աստղաբաշխական հաշիւներում:

Դ.

ՅՈՒԼԵԱՆ ՏՈՄԱՐ.

Հռովմայեցւոյ տոմարը և թուականը սկսուեցաւ Հռովմ քաղաքի շինութեան սկզբնաւորութեան օրից, Քրիստոսից 753 տարի առաջ, Հռոմուլոսի ձեռքով: Նոցա տարին տասն ամիս ունէր, այն է.

1. Մարտ	31 օր.
2. Ապրիլ	30 —
3. Մայիս	31 —

4. Կուարտիլիս	30 օր.
5. Կուինտիլիս	31 —
6. Սեքստիլիս	30 —
7. Սեպտեմբեր	30 —
8. Հոկտեմբեր	31 —
9. Նոյեմբեր	30 —
10. Դեկտեմբեր	30 —

Ընդամենը 304 —

Հռոմուլոսի յաջորդ Նումա Պոմպիլիոսը տեսաւ, որ Հռոմուլոսի տարին թէ լուսնական և թէ արեգակնային տարուց պակաս է, ուստի և սխալ. վասնորոյ նա տոմարը կարգի դնելով՝ սահմանեց որ լուսնական տարին 355 օր ունենայ, բաժանուած տասներկու ամիսների վերայ, հին տասն ամիսների վերայ աւելացնելով երկու նոր ամիս՝ Յունուար և Փետրուար:

Բայց դորանով էլ չուղղուեցաւ տոմարը, որովհետեւ լուսնական տարին ոչ թէ ամբողջ 355 օր էր կազմում, այլ 354. ուստի այս սխալը տարեց տարի աճելով շփոթում էր Հռովմէական տօների կատարման միջոցները, և այդ ժամանակից մինչև Յուլիոս կայսրը, այն է մօտ 650 տարուայ ընթացքում այդ տարբերութիւնը 67 օրի չափ եղաւ:

Յուլիոս կայսրը նկատեց այդ մեծ ան-

յարմարութիւնը և Եգիպտոսից կանչելով Սո-
զիգէն Աղէքսանդրացի անուանի աստղագէտին,
յանձնեց նորան, որ կարգի դնէ խանգարած
տոմարը: Նա այսպէս ուղղեց տոմարը:

Նախ՝ որովհետև տարեգլուխը իսկական
ժամանակից 67 օր հեռացել էր՝ այդ տարին
12-ի փոխանակ 15 ամիս դրին, որ եղաւ 445
օր, որպէս զի տարեգլուխը 67 օր առաջ անց-
նի և հետևեալ տարին իւր ժամանակին գայ:

Երկրորդ՝ նոքա թողին լուսնական տա-
րին, որ մինչև այդ ժամանակ գործ էր դըր-
ւում և ընդունեցին Եգիպտացիների գործա-
ծած արեգակնային տարին, որ ունէր 365 օր
ու 6 ամբողջ ժամ *) և որոշեցին, որ իւրա-
քանչիւր երեք տարին 365 օր հաշուեն, իսկ
այդ երեք և հետևեալ չորրորդ տարին աւե-
լացած 6 6 ժամերից գոյացած մի օրը աւե-
լացնելով չորրորդ տարուայ վերայ՝ այս վեր-
ջինս հաշուեն 366 օր: առաջին երեք տարի-
ները կոչեցին հասարակ տարի, իսկ չորրորդը՝
նահանջ: Տարուայ այդ մի օրուան տարբերու-
թիւնը որոշուեցաւ Փետրուար ամսին անել,
որը հասարակ երեք տարիները 28 օր պիտի
ունենար, իսկ նահանջ տարին 29 օր:

*) Իսկապէս արեգակնային տարին ունի 365 օր,
5 ժամ, 48 րոպէ և 50 մանրերկրորդ:

Յուլեան տոմարով ամիսները հետևեալ
կերպով բաժանուեցան.

1. Յունուար 31 օր
2. Փետրուար 28 — (նահանջ տ. 29 օր)
3. Մարտ 31 —
4. Ապրիլ 30 —
5. Մայիս 31 —

6. Յունիս 30 — | Կվարտիլիս ամիսը ի պա-
տիւ Յունիոս Բրուտոսի՝
կոչուեցաւ Յունիս:

7. Յուլիս 31 — | Կուինտիլիս ամիսը ի պա-
տիւ Յուլիոս Կայսեր՝ կո-
չեցին Յուլիս:

8. Օգոստոս 31 — | Սեքստիլիս ամիսը ի պա-
տիւ Օգոստոս Կայսեր՝
կոչեցին Օգոստոս:

9. Սեպտեմբեր 30 —
10. Հոկտեմբեր 31 —
11. Նոյեմբեր 30 —
12. Դեկտեմբեր 31 —

Յուլիոսի այս նոր կարգադրութիւնը կո-
չուեցաւ Յուլեան տոմար և այս տոմարը
սկսաւ գործածուիլ Հռոմի շինութիւնից 709
տարի յետոյ և Քրիստոսից 45 տարի առաջ
Յունուարի մէկից:

Յուլեան տոմարը մինչև այժմ գործ է
դրւում ինչպէս քանի մի ազգերի, այնպէս էլ
մեր մէջ:

Ե.

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ.

Թէպէտ Յուլեան տոմարը տարին ընդունեց 365 օր և 6 ժամ, բայց մենք գիտենք, որ տարին ճիշտ 365 օր և 6 ժամ չունի, այլ մօտ 11 րոպէ և 10 մանրերկրորդ դորանից պակաս. իսկ այդ աւելորդ րոպէները և մանրերկրորդները ժամանակի ընթացքում աճելով՝ մօտ 129 տարուայ մէջ մէկ օր են կազմում:

Այդ տարբերութիւնը Նիկիոյ ժողովից, որ գումարուեցաւ Փրկչի 325 թուին, մինչև 1582 թիւը, այն է 1257 տարուայ ընթացքում գառել էր 10 օր *), այսինքն Յուլեան տոմարը երկրիս ընթացքից յետ էր մնացել 10 օրով, այնպէս որ դարնան կամ աշնան գիշերահաւասարին իրօք տասն օր պակաս՝ հաշիւներով արդէն գիշերահաւասար էր, և այդպիսով Զատիկի տօնը փոխանակ Նիկիոյ Ժողովի որոշածի համաձայն դարնան գիշերահաւասարից յետոյ պատահող լուսնի լրման անմիջապէս հետևող կիւրակի օրը գալով՝ տասն

*) Եթէ 11 րոպէն և 10 մանրերկրորդը 1257 անգամ վերցնենք՝ գրեթէ 10 օր կըստանանք:

օր առաջ պատահեցաւ. դարնան գիշերահաւասարն այդ հաշուով Մարտի 11-ին էր, փոխանակ Մարտի 21-ին լինելու: Ուրեմն Զատիկի տօնը խախտուեցաւ:

1582 թուին Հռովմի Գրիգոր ԺԳ. պապը ուղեց ուղղել տոմարի այս սխալը և կարգադրեց, որ տոմարական հաշիւների մէջ Հոկտեմբերի 4-ից յետոյ՝ փոխանակ հաշուելու 5՝ դնեն Հոկտեմբերի 15. որով 10 օրով յետ մնացած տարին հասաւ երկրիս բնական ընթացքին: Այս ուղղած հաշիւները կոչուեցան Գրիգորեան կամ նոր տոմար:

Որովհետև 1582 թուին բոլոր կաթոլիք ազգերը Գրիգորեան տոմարով իրանց թուականին 10 օր աւելացրին, իսկ մերը մնաց անփոփոխ, այդ պատճառով 1700 թուին, որ Գրիգորեան տոմարով հասարակ տարի էր, իսկ մեր հաշուով նահանջ, զանազանութիւնը 11 օր եղաւ. միևնույն հաշուով 1800 թուին եղաւ 12 օր, իսկ առաջիկայ 1900 թուին պիտի լինի 13 օր:

Յուլեան տոմարով բացի 4 տարուց մէկը նահանջ լինելուց՝ նաև ամեն դարադրուիս նահանջ էր. բայց որովհետև վերը յիշուած աւելորդ րոպէները 400 տարուայ մէջ մօտ 3 օր և 3 ժամ էին կազմում, ուստի այդ

սխալը նորից չը կրկնուելու համար Գրիգոր պապը սահմանեց, որ չորս դարերից երեք դարագլուխը հասարակ տարի լինի, իսկ չորրորդը միայն նահանջ համարուի. օրինակ 1700, 1800 և 1900 հասարակ, իսկ 2000-ը նահանջ: Սորա հետևանքը այն կը լինի, որ 400 տարուայ վերայ փոխանակ 100 նահանջ օր աւելանալու՝ միայն 97 օր կաւելանայ և տոմարի ընթացքը գրեթէ կը հաւասարուի երկրիս ընթացքին:

Պէտք է նկատենք այստեղ, որ այս հաշիւն էլ այնքան ճիշտ չէ, որովհետեւ տարիին օրերով ամենաճիշտ կերպով չէ չափուում: Աւելի ճիշտ հաշիւ կազմել է Սէդլէր աստղագէտը. նա առաջարկում է որ 128 Յուլեան տարիներից մի նահանջ տարին հաշուենք հասարակ, այն է 365 օր, դորանով 128 տարում 31 նահանջ կը լինի և 97 հասարակ, հետևապէս մի տարին կունենայ 365,24218 օր. այս կերպ սխալը կը լինի 0,00002, այսինքն՝ միմիայն 50,000 տարումը մի օր:

Գրիգորեան տոմարը ընդունեցին Եւրոպական տէրութիւններ, իսկ հայերն ու յու՝ նազաւան տէրութիւնները չընդունեցին:

2.

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Տ Ո Մ Ա Ր .

Ա. Հայկայ թուական.

Տոմարի ուսումը Հայոց մէջ շատ հին է, բայց մեր պատմութիւնը որոշ չէ աւանդում, թէ երբ է նա սկսուած. մեր պատմագիրները և տոմարագիրները ասում են, որ Հայոց թուականը սկիզբն է առել մեր Հայկ նահապետից, մեզանից 4386 տարի առաջ հայոց Նաւասարդ ամսի 1-ին, կամ հռովմայեցոց Օգոստոսի 11-ին. այսինքն այն օրից, երբ հայոց նահապետ Հայկը Բէլին սպանելով՝ հրամայեց հայերին, որ այդ օրը տարեգլուխ համարուի և ամեն տարի հայերի այդ անկախութեան տարեդարձը տօնուի: Այս թուականը կոչուեցաւ քաղաքական տարի, Հայկայ թուական կամ Հայկայ շրջան:

Հայկայ թուականի տարին ունէր 12 ամիս 30-ական օրով, որոնք կազմում էին 360 օր. այս թիւը 365 օրուան հաւասարեցնելու համար, ինչպէս երևում է, յետոյ աւելացրել են նաև մի նոր ամիս՝ Աւելեաց անունով, որ ունէր 5 օր. այդպիսով Հայկայ թուականի

տարին 365 օր ունէր, այսինքն իսկական տարուց մօտ 6 ժամ պակաս. և այդ պատճառով այդ տարին միշտ շարժական էր, որովհետև տարին 6 ժամ յետ մնալով բնական ընթացքից, չորս տարում մի օր յետ էր մնում իսկական տարուց և մի որեկից տօն ամեն տարի միևնույն օրը չէր գալիս, քանի որ այդ 6 ժամերը հաւաքուելով, մի ժամանակ կարող էր պատահել, որ Նաւասարդը գար գարունքին կամ մի ուրիշ ժամանակ: Ահա այդ պատճառով ենթադրուում է, որ հայերը իրանց կրօնական հանդէսները որոշեալ օրերին կատարելու համար ունէին նաև հաստատուն և անշարժ տարի, որ Սրբազան էր կոչւում և որ սկսւում էր Արեգ (Մարտ) ամսից—գարնանամտից:

Հայկայ շրջան: Ուրեմն հայերն երկու տարեգլուխ ունէին, որոնց մէկի շարժականութեան և միւսի անշարժ լինելու պատճառով՝ այլ և այլ ժամանակ պատահելով պէտք է լինէր մի միջոց, երբ դժբա երկուսն էլ իրարու հանդիպէին: Այդ երկու տարեգլուխների իրար հանդիպելու համար հարկաւոր էր 1460 տարուայ շրջան, որովհետև տարուայ աւելորդ 6 ժամերը տարի են գոյացնում 1460 տարում. —

$$\begin{array}{r} 1460 \\ \times 6 \\ \hline 8760 \end{array} \quad \begin{array}{r} 24 \\ \hline 365 \end{array}$$

Չորս տարին մի անգամ նահանջ չ'անելով՝ ամիսների օրերն առաջ են անցնում և արեգականային կէտերին չեն համաձայնում, այնպէս որ այդ կէտերը 1460 տարուայ ընթացքում Հայոց տարուայ ամիսների իւրաքանչիւր օրը կարգով հանդիպում են. և ուրեմն իւրաքանչիւր 1460 տարին մի անգամ կարող է հանդիպել մի որոշ կէտին:

Որովհետև Հայկայ թուականը սկիզբն է առել Քրիստոսից 2492 տարի առաջ, ուստի առաջին հանդիպումը եղած է 1460 տարի յետոյ, այն է $2492 - 1460 = 1032$ թուին նախքան Քրիստոս Հայկազանց Պերճ երկրորդի ազգապետութեան և Դաւիթ մարգարէի թագաւորութեան օրերում: Երկրորդ հանդիպումը եղաւ Քրիստոսի 428 թուին, այն տարին, երբ հայերը Արշակունի Արտաշէս թագաւորից զրկուեցան և Հայաստանը Յունաց և Պարսից մէջ բաժանուեցաւ: Երրորդ զուգահեռութիւնը տեղի ունեցաւ 1888 թուի Օգոստոսի 11-ին հինգշաբթի օրը: Իսկ չորրորդ

Հանդիպումը կը լինի Հայկայ 5840 և Փըրկ-
չական 3348 թուին:

Հայերը ունէին նաև հետևեալ թուա-
կանները.

Բ. Հայոց լուսաւորութեան թուական.

Երբ ս. Գրիգոր Լուսաւորիչը Հայաստա-
նը լուսաւորեց քրիստոնէական լուսով՝ հայե-
րը գորա յիշատակը յաւերժացնելու համար՝
այդ օրից (1590 տարի առաջ) սկսան թուա-
կան գործածել, սակայն այդ թուականը մի-
այն գրչագիրների մէջ գործածուեցաւ և այն՝
շատ կարճ ժամանակ:

Գ. Հին տոմար կամ տոմարական թուական.

Հայերը Լուսաւորչից յետոյ սկսեցին Անդ-
րէաս Բիւզանդացու դրած 200 ամեայ շրջա-
նը գործածել, որի լրանալուց յետոյ Զատիկի
աօնը խախտուեցաւ և այդ առթիւ ազգի մէջ
զփոթութիւն ծագեցաւ. ուստի Քրիստոսի 551
թուին Եղիւարդեցի Սովսէս երկրորդ կաթու-
ղիկոսը ժողով կազմելով Դուին քաղաքում՝
կարգաւորեց մեր տոմարը և նոր թուական
սահմանեց, որ կոչուեցաւ «Հայոց մեծ թուա-

կան, և որ մինչև այժմ գործ է ածուում ազ-
գի մէջ. դա սկսուում է Քրիստոսի 552 թուի
Օգոստոսի 11-ից, որ օրը Հայոց առաջին ամ-
սի, այն է Նաւասարդի առաջին օրը դրուե-
ցաւ: Մեծ թուականը նոյնքան ամիսներ և
օրեր ունէր, որքան և Հայկայ հին թուականը:

Դ. Սարկաւազադիր կարգ.

Եկեղեցական տօները կանոնաւոր տօնե-
լու համար՝ այդ տարիներից ոչ մէկն էլ յար-
մար չէր, որովհետև այդ տարիների հաշուով
միևնոյն տօնը ամեն տարի միևնոյն օրը չէր
գալիս, այլ զանազան օրեր, այդ պատճառով
էլ հարկաւոր էր մի անշարժ տարի ունենալ,
որ և ունեցանք Յովհաննէս Սարկաւազ կո-
չուած գիտնական վարդապետի աշխատու-
թեամբ: Նա 1116 թուին մեր տոմարը վե-
րանորոգեց և նոր թուական սահմանեց, որ
կոչուեցաւ Փոքր կամ Սարկաւազադիր և կամ
Յայսմաւուրաց: Յովհաննէսը կարգադրեց, որ
ամեն տարի աւելացող մօտ 6 ժամերից չորս
տարուան ընթացքում գոյացած 1 օրը աւե-
լացուի Աւելեաց ամսի 5 օրերին, և այդպիսով
Յուլեան տոմարի նման Հայոց տարին ևս չորս
տարին մի անգամ նահանջ լինի: Այդպէս էլ

դասաւորեց նա եկեղեցական բոլոր տօները Յայսմաւուրքի մէջ, որոնք անշարժ տօնուում էին ամեն տարի:

Ե. Փոքր կամ Ազարիայի թուական.

Ջուղայեցի Ազարիա անունով մի վարդապետ Դուլիթ և Մեղքիսեդեկ կաթողիկոսներին հրամանով Քրիստոսի 1615 թուին մի նոր թուական սահմանեց Յուլեան տոմարի հաշուով, որի հետ ունեցած միակ տարբերութիւնը այն է, որ նոր տարեգլուխ նշանակեց մարտի 21-ից և ամիսներին նոր անուններ տուեց: Ազարիայի թուականը միայն Ջուղայեցի հայերը գործածեցին իբրև հայաստանից գաղթելու լիշատակ:

Ջանազան ժամանակներում մեր տոմարը նորոգեցին, առանց սակայն նոր թուական սահմանելու՝ նաև հետևեալ անձինք. —

1. 594 թուին Աբրահամ առաջին կաթողիկոսը ընդունեց Աղէքսանդրացի Էսաստղաբաշխի 532 տարուան շրջանը:

Եւ 2. 1774 թուին Սիմէոն կաթողիկոսը վերջնականապէս նորոգեց մեր տոմարը և

տօնացոյցը, որով անսխալ տօնում ենք մեր եկեղեցական տօները մինչև այժմ:

Զ. Փրկչական թուական.

Հայերի ներկայ գործածական թուականն է Փրկչական թուականը: Մօտ հինգ դար շարունակ քրիստոնեաները չունէին առանձին թուական. այդ թուականը Սկիւթացի կրօնաւոր Դիոնեսիոս կրտսերը առաջարկեց Փրկչական 532 թուին. Դիոնեսիոսը ենթադրում էր որ Յիսուսը ծնուել է Հռովմի հիմնարկութիւնից 753 տարի յետոյ. ուստի հետևեալ 754 տարին նա համարում էր Փրկչական թուականի առաջին տարին: Սխալ էր Դիոնեսիոսի հաշիւը և մինչև այժմ շարունակում ենք նորա սխալը:

Որովհետև Քրիստոսի ծնունդը պատահեց Փրկչական հասարակ թուականի սկզբնաւորութիւնից 4 տարի առաջ, վասնորոյ աւելի ընդհանուր կարծիք է Աւետարանի «ի հնգետասաներորդի ամի Տիբերեայ կայսեր»-ը սկսել Հռովմի 764 թուից, որով Քրիստոսի մահը 783-ին է ընկնում, իսկ ծնունդը 750 թուականի Յունուարի 6-ին. և այս է ահա Փրկչական թուականի սկիզբը, այն ինչ Դիո-

նեսիոսի հաշուով Քրիստոսի ծնունդը գալիս է Քրիստոսի թուականից 4 տարի առաջ:

Է.

Շ. Բ. Զ. Ա. Ն.

Շրջանը տարիների, ամիսների և օրերի միատեսակ պտույտն է, որ լրանալուց յետոյ՝ նույն պտույտը միևնույն կարգով նորից է սկսում և այդպէս շարունակուում:

Մենք արդէն տեսանք, որ արեգակի և երկնային ուրիշ մարմինների շարժման երեւոյթները ճիշտ չեն չափուում, այնպէս որ մանրր հաշիւներ չմնան վայրկեանների մանրերկրորդների, այդ պատճառով էլ հնարուած են այլ և այլ շրջաններ, որ մնացած մանր կրտորները այդ շրջանների ընթացքում մի մի ամբողջ կազմեն՝ օր կամ տարի, և այդպէս հաշիւների ճշտութիւն պահպանուի երկնային մարմինների շարժման մէջ:

Գլխաւոր շրջանները սոքա են. — Ա. լուսնի կամ Մեթոնեան շրջան և Բ. արեւի շրջան:

Ա. Լուսնի շրջան — իննեւտասներեակ — ոսկեթիւ.

Թէպէտև արեգակնային տարու հետ լուսնական տարին հաւասարեցնելու համար նահանջ տարի հաստատուեցաւ, բայց երկար ժամանակ անցնելուց յետոյ այդ հաւասարութիւնը դարձեալ կատարեալ չեղաւ: Դորա համար Քրիստոսից 430 տարի առաջ Մեթոն Ա. թեոնացի աստղագէտը գտաւ, որ եթէ արեգակը և լուսինը միևնույն վայրկենին և միևնույն կէտից սկսեն իրանց շրջանն անել, 19 տարուց յետ միևնույն ժամանակ երկուսն էլ կհասնեն միևնույն տեղը: Այդ բանը հետեւեալ կերպով է բացատրուում.

Լուսնական ամիսը 29,53 օր ունի. 12 այդպիսի ամիս կամ մի լուսնական տարի կունենայ

$$12 \times 29,53 = 354,36 \text{ օր}$$

այսինքն լուսնական տարին համարեա՛ 11 օր կարճ է Յուլեան տարուց (որ 365,25 օր է):

Եթէ լուսնական ամիսը կրկենք 235 անգամ, իսկ Յուլեան տարին 19 անգամ, գրեթէ միևնույն թուերը կըստանանք (6939,55 և 6939,75, ուրեմն 19 տարուայ մէջ արեւի և լուսնի շրջանների տարբերութիւնը է 1 ժ.

26 ր. 24 մ.). սորանից հետևում է, որ 19 Յուլյան տարիները հաւասար են 235 լուսնական ամիսներին, կամ, այսպէս ասենք, 19 տարում լուսինը 235 ամսական շրջան է կատարում. այս պատճառով 19 տարի անցնելուց յետոյ լուսնի երևոյթը անդրադառնում է նոյն կարգով, ինչպիսի ընթացք որ ունէր նախընթաց 19 տարուայ ընթացքում:

Այդ շրջանի սկիզբը այն տարեթիւն է, երբ Յունուարի 1-ին լուսնի ծնունդն է լինում: Փրկչի ծննդեան տարին լուսնի շրջանի վերջին տարին էր, այսինքն մի տարի էր մընում լրանալուն. այս 19 տարուան շրջանը կոչւում է լուսնի շրջան, իսկ այն թուերը, որոնք ցոյց են տալիս այդ շրջանի տարիները՝ կոչւում են *իննետասներեակ*:

Այդ շրջանը կոչւում է նաև Մեթոնեան, Մեթոնի անունով: Աթենացիները զարմանալով Մեթոնի այդ գիւտի վերայ՝ քաղաքի հրապարակում մարմարիոնի կոթող կանգնեցրին և ոսկէ տառերով սկսեցին գրել նորա վերայ իւրաքանչիւր տարուայ իննետասներեակը. վասնորոյ դա ասուեցաւ նաև *ոսկեգիր*:

Իննետասներեակը գտնելու կանոն.

Իննետասներեակ գտնելու ամենապարզ կանոնը այս է. — Աշխարհիս ստեղծման թուականը բաժանել 19-ի վերայ. քանորդը ցոյց կըտայ թէ աշխարհիս ստեղծմանից մինչև այժմ քանի լուսնի շրջան է անցել, իսկ մնացորդը թէ տուած թուականը վերջին շրջանի քանիերորդ տարին է:

Իննետասներեակ գտնել կարելի է և այսպէս. — Տուած թուականից հանել 1. (Փրկչի թուի, ինչպէս և Հայոց թուականի առաջին տարիները իննետասներեակի շրջանի 19-րդ տարին էր) և բաժանել 19-ի վերայ. քանորդը ցոյց կըտայ թէ Քրիստոսի ծննդից մինչև տուած թուականը քանի լուսնի շրջան է անցել, իսկ մնացորդը, թէ տուած թուականը քանիերորդ տարին է լուսնի վերջին շրջանի:

Բ. Արեւի շրջան.

Արեւի շրջանը 28 տարուան միջոց է. կիւրակիները և շաբաթուայ օրերը տոմարագիտութեան մէջ ինչ գրերով որ նշանակուած են 28 տարի առաջ, նոյն գրերով էլ նշանակուած են այդ 28 տարին վերջանալուց յետոյ:

վ ե ռ ա դ ի ը.

Տասնևինն տարուայ հաշիւը բաւական ճիշտ կերպով ցոյց էր տալիս լուսնի ծննդի և լրման ժամանակները. բայց մենք գիտենք, որ արեւի ու լուսնի շրջանները դարձեալ մօտ $1\frac{1}{2}$ ժամի չափ տարբերութիւն ունէին (իսկապէս 1 ժ. 26 ր. 24 մ.), որոնք երկար տարիների ընթացքում օրեր ու ամիսներ էին դառնում և այդպիսով նոր շփոթութիւն առաջ բերում տոմարական հաշիւների մէջ. ուստի իննևտասներեակի այդ սխալն ուղղելու համար վերադիւրների շրջանը հնարուեցաւ:

Ինչպէս վերը տեսանք, արեգակնային տարին ունի մօտ 365 օր 6 ժամ և լուսնական տարին՝ մօտ 354 օր և 8 ժամ. այս երկու տարիների տարբերութիւնը կոչւում է վերադիւր, որ ցոյց է տալիս արեգակնային տարուայ լուսնական տարուց աւելի օրերի թիւը, որ աւելացնելով լուսնական տարու վերայ հաւասարեցնում ենք արեգակնային տարուն:

Այդ զանազանութիւնը մօտ 11 օր է, չնչին բան պակաս, ուստի 11 թիւը լուսնական շրջանի առաջին տարուայ վերադիւրն է:

Լուսնական տարին ամեն տարի յետ մընալով արեգակնային տարուց 11 օր, 19 տարում յետ կը մնայ $19 \times 11 = 209$ օր կամ եօթըն ամսից մի օր պակաս: Այս պակաս օրերը վերադիւրներով հետզհետէ այսպէս ենք աւելացնում լուսնական տարուն.

Իւրաքանչիւր տարուայ 11 օրերը հետըհետէ աւելացնելով միմեանց վերայ՝ երեք տարում գոյացնում են 30-ից աւելի օրեր, որոնցից 30 օրը հանելով աւելացնում ենք լուսնական տարուն, իսկ մնացածը թողնում ենք վերադիւր հետևեալ տարուայ համար. այդպէս շարունակում ենք, մինչև որ պակասորդ 209 օրը 19 տարուայ ընթացքում կ'միաւորուի լուսնական տարուն. բայց որովհետև այդպիսով 19 տարում ոչ թէ 209 օր կըկազմէ, այլ 208 օր, վասնորոյ հաշիւների ճշտութեան համար՝ մի տեղ փոխանակ 11 օր աւելացնելով՝ մենք աւելացնում ենք 12 օր, և այդ ընդունուած է ներքոյ դրուած աղիւսակի 19-դ տարում, ուր 9 թուին աւելացնելով փոխանակ 11-ի 12՝ ստացել ենք վերադիւր 21, փոխանակ 20-ի:

Երբ յայտնի է վերադիւրի առաջին թիւը, հեշտութեամբ կարելի է կազմել վերադիւրների կարգը. գիտենալով որ ամեն տարի 11 օր ա-

ւելացնելով լուսնական տարու վերայ՝ հաւասարուում է արեգակնային տարուն՝ այսպէս ենք որոշում վերագիրները։—

Առաջին տարուայ վերագիրն է 11, երկրորդինը 22, երրորդինը 33, որից 30 հանելով՝ մնում է 3 (որովհետեւ 33 օրից 30 օրը մի լուսնական ամիս լինելով աւելացրինք նախընթաց տարուն, այսինքն 12 ամսի փոխարէն 13 հաշուեցինք և մնացեալ 3-ը մնաց հետեւեալ տարուայ վերագիր)։ միևնոյն հաշուով՝ չորրորդինը՝ 14, V—25, VI—6, VII—17, VIII—28, IX—9, X—21, XI—2, XII—13, XIII—24, XIV—5, XV—16, XVI—27, XVII—8, XVIII—19, XIX—30։

Յուլեան տոմարով, որը գործ ենք դնում նաև մենք, վերագիրների աղիւսակի սկիզբընդունուած է 2—բ։

Վերոյիշեալներից պարզ երևում է այն կապը, որ կայ վերագրի և իննևտասներեակի մէջ և թէ այս երկու տարրից մէկը կարող է ծառայել միւսի գտնելուն։

Վերագիրների աղիւսակ.

բ	ժգ	իդ	ե	ժգ	իէ	ը	ժթ	լ	ժա
իբ	գ	ժդ	իե	զ	ժէ	իը	թ	իա	×

Իննևտասներեակ գտնելու ձևը գիտենք. եթէ հարկաւոր լինի իմանալ, թէ որ և ից տարուայ վերագիրը որն է, իննևտասներեակի թիւը գտնելով՝ նոյն թուով խորանում գտնուած տառը կը լինի միևնոյն տարուայ վերագիրը, հաշուելով աղիւսակի սկզբից։

Ը.

Ե Օ Թ Ն Ե Ր Ե Ա Կ.

Զատիկի և նորա հետ կապ ունեցող այլ ամենայն տօները և միջոց ուտիքները գրտնելու համար ամենից առաջ պէտք է գիտնալ թէ տարուայ առաջին օրն ինչ օր է. դորա համար գործ ենք դնում այլբենի առաջին եօթն տառերը, որոնցից ամեն մէկը շաբաթուայ համապատասխան օրեր են նշանակում և կոչում են եօթներեակ։ Այդ եօթը տառերից ամեն մէկը մէկ տարուայ ա-

առջին օրն է: Եւ որովհետեւ եօթներեակները ցոյց են տալիս նաեւ տարուայ մէջ եղած կիրակիները՝ այս պատճառով եօթներեակը կ'ոչ-լուծ է նաեւ՝ կիրակւսգիր:

Եօթներեակները 28 տարուան շրջան ունին. և դորա պատճառն այս է. եթէ նահանջ տարի ամենեւին չը լինէր, այն ժամանակ եօթներեակները մէկ ծայրից սկսելով եօթն տարում բոլոր եօթն տառերն էլ գործ կ'ածուէին և ութերորդ տարին նորից առաջինին կը դառնայինք, հետեւապէս եօթներեակը կ'ունենար 7 տարուան շրջան. բայց որովհետեւ երեք հասարակ տարուց յետոյ միշտ չորրորդը նահանջ է լինում, այն է մի օր աւելի, և ուրեմն եթէ նահանջ տարին տարեգլուխը դիցուք երկուշաբթի է, հետեւեալ տարին երեքշաբթի չի կարող լինել, այլ միայն մի օր ուշ—չորեքշաբթի, այդ պատճառով էլ եօթներեակները հասարակ տարին մի տառ, իսկ նահանջ տարին երկու տառ ունենալով, կարգով շարունակուում են և աւարտուում ոչ թէ 7 տարում, այլ միայն՝ 28 տարուայ ընթացքում: Այս շրջանը արեւի շրջան է անուանուում, թէև ոչինչ վերաբերութիւն չունի արեւի հետ:

Եօթներեակների համակարգութիւնը: Եօթներեակները հեշտ գտնելու համար 28 տարուան շրջանով մի աղիւսակ ունինք, որի կազմութիւնը շատ հասարակ է. չորս կարգ եօթնական խորանից բաղկացած մի ցանցի սկզբից գրում ենք ա. ը. գ. դ. ե. զ. է. Եօթներեակները սկզբից, միայն վերոյիշեալ կանոնը պահելով, երեք խորանում երեք տառ, չորրորդում երկու յաջորդ գրերը և այդպէս շարունակ մինչև վերջ: Այդպիսով կը ստանանք այս աղիւսակը.

1	2	3	4	5	6	7
ա	բ	գ	դ	ե	զ	է
8	9	10	11	12	13	14
բգ	դ	ե	զ	էա	բ	գ
15	16	17	18	19	20	21
դ	եզ	է	ա	բ	գգ	ե
22	23	24	25	26	27	28
զ	է	աբ	գ	դ	ե	զէ

Եօթներեակը գտնելու պարզ ձեւը այս է.

Փրկչական թուականի համար: Որովհետեւ Փրկչական առաջին թուականը արեւի շրջանի հինգերորդ տարին է, վասնորոյ 28 տարուայ շրջանն ամբողջացնելու համար նախընթաց 4 տարին աւելացնում ենք այն թու-

ականի վերայ, որի եօթներեակը ուզում ենք գտնել և բաժանում 28-ի վերայ. մնացորդ թուի համապատասխան խորանում գտնուած տառը է նոյն թուի եօթներեակը: Եթէ մի տառ է՝ հասարակ տարի է, իսկ եթէ երկու տառ է՝ նահանջ, որոնցից առաջին տառը գործ է ածւում Յունուար և Փետրուար ամիսներում, իսկ երկրորդը Մարտի մէկից մինչև տարուայ վերջը:

Հայոց տոմարական թուականի համար: Որովհետև տոմարական թուականի առաջին տարին արևի շրջանի 24-դ տարին էր, ուրեմն 5 տարի պակաս էր շրջանի ամբողջացման, ուստի 5 տարին հանում ենք Հայոց այն թուականից, որի եօթներեակը կամենում ենք գտնել, որպէս զի մի շրջան ամբողջացուի և միևսի սկզբին հասնենք և այդ թիւը 28-ի վերայ ենք բաժանում. մնացորդ թուի համապատասխան խորանի տառը՝ նոյն թուականի եօթներեակն է:

Թ.

Կ Ր Կ Ն Ա Կ.

Մէկ ամսի՝ չորս եօթներեակից կամ շաբաթից աւելի ունեցած օրերը կոչւում են միևս ամսուայ կրկնակ: Կրկնակի հաշիւը սկսւում է տարուայ առաջին ամսից, Փրկչի թուակա-նի համար՝ Յունուարից, իսկ Հայոց թուակա-նինը՝ Նաւասարդից:

Այսպէս՝ Յունուարը 31 օր ունի, 4 եօթ-ներեակը կամ 28 օրը հանած մնում է 3 օր. 3-ը Փետրուարի կրկնակն է. այս 3-ը աւելա-ցնում ենք Փետրուարի օրերին (28, նահանջ տարին 29 օրին) և եօթներեակներ կազմում, մնացորդը Մարտի կրկնակն է. և այսպէս շա-րունակում ենք մինչև տարուայ վերջը. նոյն-պէս ենք կազմում և՛ Հայոց ամիսների կրկ-նակը:

Կրկնակ գտնելու ամենապարզ ձևը սա է. — որ ամսի կրկնակը որ ուզում ենք գրտ-նել՝ պէտք է Յունուարի 1-ից մինչև այն ամսի 1-ը օրերը գումարենք և 7-ի բաժա-նենք, մնացորդը նոյն ամսուայ կրկնակն է:

Կրկնակով գտնւում է ամսամուտը, և առհասարակ ամսի այլ և այլ օրերը:

Ամսամուտ: Մենք գիտենք, որ եօթներեակը ցոյց է տալիս թէ տարուայ առաջին օրը ինչ օր է. ամսամուտը գտնելու համար վերցնում ենք տուած տարուայ եօթներեակը, աւելացնում ենք այն ամսի կրկնակը, որի ամսամուտը ուզում ենք գտնել և նոյն ամսի առաջին օրը—1 թիւը, եօթներեակներ դարձնելով՝ մնացորդը լինում է ամսամուտ, այն է՝ 1-ը կիրակի, 2—երկուշաբթի, 3—երեքշաբթի, 4—չորեքշաբթի, 5—հինգշաբթի, 6 ուրբաթ, և 7—շաբաթ:

Օրի նա կ.

Գտնել թէ ինչ օր է 1895 թ. մարտի 1-ը.

եօթներեակը	7
կրկնակը	3
ամսի առաջին օրը	1
	11
	— 7

մարտի 1-ը չորեքշաբթի է՝ 4

Ամսի որելիցէ օրը գտնել: Միւսնոյն կանոնով գտնուում է նաև ամսի մէջ ցանկացած օրը, միայն այն ժամանակ եօթներեակի և կրկնակի վերայ աւելացնում ենք ոչ թէ 1,

այլ այնքան թիւ, որքան օր անցել է ամսի 1-ից մինչև նոյն ամսի ցանկացած օրը:

Գտնել 1895 թ. մարտի 19-ը ինչ օր է.

եօթներեակ	7
կրկնակ	3
ամսի օրերը	19
	29 7
	28 4

մարտի 19 կիրակի է 1

ժ.

ՎԵՐԱԴՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Ա. Լուսնի ծնունդը գտնել: Լուսնի ծընունդը գտնելու ամենահեշտ ձևը սա է. — պէտք է վերցնել տարուան վերադիրը, աւելացնել վերան այնքան թիւ, ինչքան ամիս որ Յունուարից անցած է (նախընթաց ամիսների թիւը) և այդ բոլորը հանել 30-ից և կամ եթէ դորանից աւելի է, 60-ից, որքան մնաց՝ ամսի այնքանին լուսնի ծնունդ է:

Գտնել 1895 թ. մարտի լուսնի-ծնունդը.

վերադիր	14
անցած ամիսների թիւը	2
	16

30

— 16

մարտի 14-ին լուս. ծնունդ է:

Բ. Լուսնի լրումը: Լուսնի լրումը գըր-
նելու համար պէտք է տարուայ վերադրի
վերայ աւելացնել անցած ամիսների թիւը և
հանել 43-ից, ¹⁾ մնացորդ թիւը ցոյց է տա-
լիս թէ տուած ամսի այդ օրն է լուսնի լրումը:

Գտնել 1895 թ. ապրիլի լուսնի լրումը:

վերադիր	14
անցած ամիսների թիւը	3
	17

43

— 17

ապրիլի 26-ին լրումն է լուսնի:

1) 43 կոչուում է հանապազօրդական թիւ, որը
հիմնուած է փորձերի վերայ:

Գ. Լուսնի այլ եւ այլ օրերը գտնել:
Տուած ամսի օրերին աւելացնենք տարուայ
վերադիրը և նախընթաց ամիսների թիւը.
ստացած թիւը ցոյց է տալիս, որ մեր ցան-
կացած օրը լուսնի այդքանն է. եթէ ստա-
ցած գումարը 30-ից աւելի է՝ 30-ը հանելով՝
մնացորդն է լուսնացոյց օրը:

Գտնել 1895 թ. մայիսի 5-ին լուսնի քանիսն է.

տուած ամսի օրերը	5
վերադիրը	14
անցած ամիսների թիւը	4
մայիսի 5-ին լուսնի	23 է:



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ՏՕՆԵՑՈՅՑ ՀԵՅԸՍՏԵՆԵԼՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺԱ.

Զ Ա Տ Կ Ի Տ Օ Ն Ը.

Ա. *Զատիկը.*

Բոլոր շարժական տօները կախումն ունին սուրբ Զատիկի տօնից, իսկ Զատիկի տօնը Զատիկական լուսնից:

Յիսուս Քրիստոսի յարուժիւնը պատահեցաւ Հրէից պատեքի տօնին, որ էր նոցա Նիսան ամսի 14-ը լուսնի լրման ժամանակ. իսկ Փրկչի խաչելութիւնը պատահեցաւ զարնան գիշերահաւասարին, այն է Մարտ ամսի 21-ին: Ուստի ոմանք քրիստոնեաներ Զատիկի տօնի կատարման ժամանակը շփոթում էին Հրէից Պատեքի տօնի հետ, այն է փոխանակ Պատեքի մերձակալ կիւրակի օրը կատարելու՝ ուղղակի Հրէից Պատեքի տօնի հետ միասին տօնում էին նաև Փրկչի յարուժիւնը:

Այս էր պատճառը, որ Նիկիոյ սուրբ ժողովը զբաղեցաւ Զատիկի տօնի կատարման հարցով և սահմանեց, որ բոլոր քրիստոնեաները Զատիկի տօնը անխտիր Հրէից Պասեքի տօնի հետ չը տօնեն և դորա համար հետեւեալ կանոնը սահմանեց. —

Ա. Զատիկի տօնը կատարել գարնան գիշերահաւասարից, կամ մարտի լուսնի լրումից յետոյ՝ անմիջապէս պատահող կիւրակի օրը:

Բ. Եթէ որ մարտի լուսնի լրումը մարտի 21-ից առաջ պատահի, Զատիկը պէտք է տօնել ապրիլի լուսնի լրումից յետոյ պատահող առաջին կիւրակի օրը:

Բ. Զատիկական լուսինը եւ Զատիկի տօնի սահմանը:

Որովհետեւ, ինչպէս ասացինք, Յիսուսի յարութիւնը պատահեցաւ գարնան գիշերահաւասարից, այսինքն մարտի 21-ից յետոյ պատահող լուսնի լրմանը (որ կոչուում է լուսնի աւագ լրումը) կիւրակի օրը՝ այդ պատճառով Զատիկական լուսնի ծնունդը չի կարող մարտի 8-ից առաջ պատահել, որովհետեւ մարտի 8-ին ծնած լուսինը լրանում է մարտի 21-ին, իսկ եթէ առաջ լինի ծնուած՝ լրումը

կը պատահի մարտի 21-ից կամ գարնան գիշերահաւասարից առաջ, երբ Նիկիոյ ժողովի որոշման համաձայն, անկարելի է Զատիկի տօն կատարել:

Այդպէս էլ Զատիկական լուսնի ծնունդը ապրիլի 5-ից յետոյ չի կարող պատահել հետեւեալ պատճառով. — մարտի 7-ին ծնած լուսինը լրանում է 20-ին. ուրեմն այդ լուսնին Զատիկի տօն չի կատարուի համաձայն Նիկիոյ ժողովի որոշման. այդ լուսինը վերջանում է ապրիլի 4-ին. 5-ին նոր լուսին կը ծնուի, 18-ին կը լրանայ և այդ օրից ամենաշատը 7 օր յետոյ, ուրեմն ապրիլի 25-ին կը տօնուի Զատիկը:

Ուրեմն Զատիկական լուսնի ծննդեան շրջանը ձգւում է մարտի 8-ից մինչեւ ապրիլի 5-ը. աւագ լրումը տեղի ունի մարտի 21-ից մինչեւ ապրիլի 18-ը. իսկ Զատիկի տօնը կատարւում է մարտի 22-ից մինչեւ ապրիլի 25-ը 35 օրուան շրջանում պատահած կիւրակներէ մէկում, երբեք ոչ առաջ և ոչ էլ յետոյ:

ՃԲ.

Տ Ա Ր Ե Գ Ի Ր.

Զատիկը հեշտութեամբ գտնելու համար ամեն մէկ տարուայ համար մի գիր է որոշուած, որ կոչուում է գիր տարւոյն կամ տարեգիր. դա մի չափ է շարժական տօներին, որոնք շարժուում են Զատիկի տօնի համեմատ:

Ասացինք, թէ Զատիկի տօնը կատարուում է մարտի 22-ից մինչև ապրիլի 25 պարունակուող 35 օրերից մէկում, ահա այդ 35 օրերի թուով որոշուած են Հայկական ալբուբենի 35 տառերը, որոնք ցոյց են տալիս, թէ Զատիկը քանի օր հեռու է գարնան գիշերահաւասարից, կամ մարտի 21-ից:

Այստեղ դրած աղիւսակը ներկայացնում է տարեգիրների կարգը՝ զուգընթաց Զատիկի տօնի կատարման օրերի հետ.—

1. ա	մարտի	22	8. ը	մարտի	29
2. ը	»	23	9. թ	»	30
3. գ	»	24	10. ժ	»	31
4. դ	»	25	11. ի	ապրիլի	1
5. ե	»	26	12. լ	»	2
6. զ	»	27	13. խ	»	3
7. է	»	28	14. ծ	»	4

15. կ	ապրիլի	5	26. պ	ապրիլի	16
16. հ	»	6	27. ղ	»	17
17. ճ	»	7	28. ռ	»	18
18. ղ	»	8	29. ս	»	19
19. ժ	»	9	30. Վ	»	20
20. ժ	»	10	31. տ	»	21
21. յ	»	11	32. ը	»	22
22. ն	»	12	33. ց	»	23
23. շ	»	13	34. լ	»	24
24. ռ	»	14	35. ի	»	25
25. չ	»	15	36. ք		

ՃԳ.

ՏԱՐԵԳՐՈՎ, ԶԱՏԻԿԸ ԳՏՆԵԼ.

Եթէ ուզում ենք իմանալ, թէ որ և է տարի Մարտի կամ Ապրիլի քանիսին է գալիս Զատիկը՝ նոյն տարուայ տարեգրի թիւը աւելացնում ենք գարնան գիշերահաւասարի— Մարտի 21-ի ի վերայ և ուր դադարի՝ անպայման Զատիկ է այն օրը:

Հասարակ տարիների համար գործ է ածւում մի տառ, իսկ նահանջ տարիների համար 2 տառ, որոնցից մէկը գործ է ածւում

Յուշուարի մէկից մինչև Փետրուարի վերջը, իսկ միւսը Մարտի մէկից մինչև տարեվերջ: Նահանջ տարուայ տարեգիրները դրւում են յետ ու առաջ. այսինքն առաջ յաջորդ տառը, յետոյ նախորդը, որովհետև յաջորդը, որ Յուշուար ու Փետրուար ամիսներումն է գործ դրւում, մի թուով աւելի է նախորդից. այդ հաշուով վերջին Ք տառը, որ միշտ Փ—ի հետ է գործ դրւում նահանջ տարիներին, դրւում է նախագաս և գործ է դրւում միայն Յուշուար ու Փետրուար ամիսներին:

ՃԴ.

ՏԱՐԵԳԻՐ ԳՏՆԵԼՈՒ ԿԱՆՈՆ.

Արդէն գիտենք, որ տարեգիրը ցոյց է տալիս, թէ Զատիկը քանի օր հեռու է մարտի 21-ից, ուրեմն եթէ Զատիկը գտնենք՝ նորանով անմիջապէս կը գտնենք տարեգիրը:

Բայց այդ դէպքում Զատիկի տօնը ոչ թէ տարեգրով պէտք է գտնենք, քանի որ տարեգիրն անյայտ է, այլ եօթներեակով և վերադրով: Իսկ Զատիկի տօնը գտնելու համար նախ և առաջ պէտք է գտնել *Զատիկական լուսնի լրումը* կամ *աւագ լրումը*, վասնզի,

ինչպէս մենք գիտենք, Զատիկի տօնը անմիջապէս կապ ունի Զատիկական լուսնի լրման հետ:

Լուսնի աւագ լրումը գտնելու համար շատ ձևեր կան, սակայն նոցանից կարճը սա է. —

Ընդունուած է մի թիւ՝ 46. այդ թիւը կոչւում է *հանապազորդական թիւ*. դորանից հանում ենք տուած տարուայ վերադիրը՝ մնացածը հաշւում ենք Մարտի մէկից, ուր վերջանայ՝ այն օրը լուսնի աւագ կամ Զատիկական լրումն է ցանկացած տարուայ, իսկ յաջորդ կիւրակի Զատիկի տօնն է:

Եթէ վերադիրը 46 թուից հանելով՝ մնացորդը 21-ից պակաս է մնում, այդ դէպքում Մարտի վերջին օրուանից պէտք է հաշուել, և ուր դադարի՝ այն օրն է լուսնի աւագ լրումը, իսկ յաջորդ կիւրակի Զատիկի տօնըն է:

Իմանալու համար թէ լուսնի աւագ լրումը շաբաթուայ որ օրն է գալիս, գործ ենք դնում եօթներեակը, որ ցոյց է տալիս շաբաթուան օրերը:

Այսպէս Զատիկի տօնը գտնելուց յետոյ մենք արդէն գիտենք նոյն տարուայ տարեգիրը: Յայտնի է, որ տարեգիրը ցոյց է տալիս

Թէ Զատիկի տօնը քանի օր հեռու է Մարտի 21-ից. հետևապէս երբ յայտնի է Զատիկի տօնի օրը՝ կը հաշուենք թէ այդ օրը քանի օր հեռու է մարտի 21-ից և ինչ թիւ որ կը ստանանք մեր այբուբենից, նոյն թուին համապատասխանող տառը կըլինի նոյն թուի տարեգիրը:

Օրինակ.

1895 թ. վերադիրն է ԺԴ (14)	46
—	14
	32
մարտ —	31
աւագ լրումն է ապրիլի 1-ին	1

Գտնել թէ ինչ օր է ապրիլի 1-ը.

Եօթներեակ 1895 թ.	7
Կրկնակ	+6
Ամսի առաջին օրը	1
	14
—	7

Ապրիլի 1-ը շաբաթ օր է 7

Հետևեալ կիրակի՝ ապրիլի 2-ին Զատիկ է: Ապրիլի 2-ը 12 օր հեռու է մարտի 21-ից, ուրեմն 1895 թ. տարեգիրն է այբբենի 12-րդ գիրը կամ Լ տառը:

ԺԵ.

ՀԻՆԳՀԱՐԻԻՐԵԿԻ ՇՐՋԱՆ.

Չորրորդ դարում Անդրէաս անունով մէկ Բիւզանդացի իմաստասէր կարգի դրեց Յուլեան տոմարը. նա գտաւ, որ արեւի 28 ամեայ և լուսնի 14 ամեայ շրջաններից կազմւում է մի նոր—մեծ շրջան 532 տարուայ, որ յառաջանում է 28 և 19 թուերի բազմապատկութիւնից: Այդ երկու շրջանները մի անգամ միասին սկսուելով՝ միայն 532 տարուց յետոյ միեւնոյն դասաւորութեամբ կարող են կրկնուիլ և մեր եկեղեցական տօներն էլ միևնոյն կերպով կրկնւում են միայն 532 տարուայ շրջանում:

Այդ նոր շրջանը կոչւում է մշտնջենաւոր շրջան և կազմում է նաև մեր հայ եկեղեցական տօների կարգաւորութեան հիմքը:

Մշտնջենաւոր շրջանը հետևեալ կերպով է կազմւում. Կիւրակին հին ժամանակ կոչւում էր «օր արեգական» և որովհետև կիւրակիները ցոյց է տալիս Եօթներեակը, այս պատճառով Եօթներեակների 28 ամեայ շրջանը, ինչպէս գիտենք, կոչւում է արեգական շրջան: Գիտենք նաև, որ Եօթներեակ-

ները մի տեղից սկսելով և աւարտելով 28 տարուան շրջանը՝ այնուհետեւ նորից սկսում են միեւնոյն համակարգութեամբ կրկնուիլ նոյն ձևով: Ուրեմն 28 տարին մի անգամ օրերը տարուայ ընթացքում միեւնոյն կերպ յաջորդում են միմեանց:

Եթէ միայն շաբաթուայ օրերի հետ կապ ունենային մեր տօները և լուսինը գեր չը խաղար այդտեղ՝ 28 տարուան շրջան կունենային նաև մեր եկեղեցական տօները: Սակայն մենք գիտենք, որ տարուայ բոլոր տօներին ուղեցոյց — Չատկի տօներ կախումն ունի զատկական լուսնից, իսկ լուսինը ունի տասնևինն տարուան շրջան — իննևտասներեակի, այսինքն լուսինը մի որոշեալ տարուայ մէջ ինչ օրեր որ ծնում է, 19 տարուց յետոյ միայն միեւնոյն օրերը կարող է ծնուիլ, թէպէտ և ոչ միեւնոյն ժամերին:

Ուրեմն մենք ունինք երկու շրջան — մէկը 28 տարուան, որ ցոյց է տալիս 28 տարին մի անգամ օրերի միակերպ յաջորդութիւնը տարուան ընթացքում, միւսը 19 տարուան, որ ցոյց է տալիս 19 տարին մի անգամ լուսնի, ուրեմն նաև զատկական լուսնի ծննդեան ու լրման միակերպ յաջորդութիւնը տարուան ընթացքում:

Եթէ 19 տարում մի անգամ լուսնի, ուրեմն և Չատկի ամսի ու ամսաթուի դասաւորութիւնն է փոխւում, իսկ 28 տարին մի անգամ օրերի, ուրեմն նաև Չատկի օրուայ դասաւորութիւնն է փոխւում, 19 անգամ 28 տարում ($19 \times 28 = 532$) մի անգամ պէտք է Չատկի, ինչպէս նաև նորա հետ կապ ունեցող շաբաթական տօները պատահեն թէ տարուայ միեւնոյն ամսի միեւնոյն օրում և թէ շաբաթուայ միեւնոյն օրերում:

Եւ ահա կազմուեցաւ 532 տարուայ շրջանը, որի վերայ հիմնուած է մեր եկեղեցական տօնացոյցը:

Թէպէտ այս շրջանը Անդրէաս Բիւզանդացին չորրորդ դարում գտաւ, բայց այդ շրջանի սկիզբը նա համարեց Փրկչի ծնունդից: Երբ այս առաջին շրջանը վերջացաւ՝ մեր տօմարը շփոթուեցաւ, որի պատճառով Չատկի տօնն էլ խանգարուեցաւ: Ուստի մի քանի տարուց յետոյ մեր Մովսէս Բ. Եղիւարդեցի կաթողիկոսը Դուին քաղաքում ժողով գումարելով կարգի դրեց տօմարը և որոշեց, որ 552 թուից սկսուի հինգհարիւրեկի երկրորդ շրջանը:

ԺԶ.

ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԱՂԻՍԱԿ.

Վերոյիշեալ փաստերի հիման վերայ կազմուեցաւ 532 տարուայ մշտնջենական աղիւսակը. և այդ ժամանակաշրջանի աւարտելուց յետ նորից միւսնոյն դասաւորութեամբ կրկնուում են իւրաքանչիւր տարուայ թէ տարեգիրները, թէ վերագիրները, թէ եօթներեակները և թէ Ձատկի տօնը և սորա հետ կապուած բոլոր շարժական տօները իրանց միջոց ուտիքներով:

Մշտնջենական աղիւսակը պարզ ցոյց է տալիս մեզ 532 տարուայ Քրիստոսի և Հայոց տոմարական թուականները և տարեգիրների, վերագիրների ու եօթներեակների դասաւորութիւնը: Իսկ տօները և իրանց միջոցները ցոյց տալու համար կազմուած է տօնացոյց տարեգիրների թուի համեմատ:

Մշտնջենական աղիւսակը կազմուած է հետեւեալ ձևով. —

Մի ցանց ուղղահայեաց 28 խորաններով և հորիզոնական 19 խորաններով ($28 \times 19 = 532$). վերեւից իւրաքանչիւր խորանի գլխին գրուում են 19 վերագիրները. ձախ կողմից 28

խորաններին կից գրուում են Փրկչական և Հայկական թուականները — որ և է մեծ շրջանի սկզբից, պարզ բան է մեզ համար վերջին հինգհարիւրեկի առաջին տարուց, այսինքն Փրկչական 1616 և Հայոց ՌԿԵ թուից: Առաջին խորանի մօտ գրուելով 1616 թիւը, շարունակ ենթագրուում է հետեւեալ 19 թուականները մինչև առաջին կարգի խորանների վերջնաւը. ուրեմն երկրորդ կարգի խորանների սկզբին դնում ենք 1635 թիւը. և այդպէս շարունակուում է մինչև վերջը: Իսկ այդ խորաններում դնում ենք համապատասխան տարիների տարեգիրները և եօթներեակները:

Եւ ահա պատրաստ է մշտնջենական շրջանի աղիւսակը, որի աւարտելուց յետոյ նորից վերագառնում ենք նորա սկզբին, փոխելով միայն թուականները:

ԺԷ.

ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐԱԿԱՆ ԱՂԻՍԱԿ.

Շարժական գլխաւոր տօների և միջոց ուտիքների համար տօնացուցից քաղած մի համառօտ աղիւսակ կայ, որ նոյնպէս տարեգիրների ղեկավարութեամբ է կազմած. սա

գլխաւորապէս դըրուած է ժամագրքերում, որ-
պէս զի նախընթաց աղիւսակով գտնելով ցան-
կացած տարուալ տարեգիրը՝ սորանով ևս գըտ-
նենք նոյն տարուալ գլխաւոր շարժական տո-
ները և միջոց ուտիքները: Սա շատ պարզ է
կազմած. — նոյնպէս մի ցանց, որի ձախ կող-
մից ուղղահայեաց դըրուած են 36 տարեգիր-
ները, իսկ վերեւից նշանաւոր շարժական տո-
ներն ու միջոց ուտիքները. իսկ խորաննե-
րում դըրուած են համապատասխան ամսա-
թուերը և օրերը:

ԺԸ.

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՅՈՅՑ.

Մեր եկեղեցական տօնացոյցը սկզբնաւո-
րուել է սուրբ Գրիգոր Լուսաւորչից Հայոց
ազգի լուսաւորութեան սկզբին երրորդ դա-
րում և կարգի է բերուել նախ՝ հինգերորդ
դարում ս. Սահակ Պարթև, Գիւտ և Յովհան
Մանգակունի հայրապետների ձեռքով, երկ-
րորդ անգամ՝ երկոտասաներորդ դարում ս.
Ներսէս Շնորհալի հայրապետի ձեռքով և վեր-
ջին անգամ՝ անցեալ տասն և ութերորդ դա-
րու վերջին կիսում երջանկայիշատակ Սիմէոն

կաթուղիկոսի ձեռքով, որը և տօնացոյցը բա-
ժանեց երկու հատորի, որոնցից

ա. Առաջին հատորը պարունակում է
իւր մէջ բոլոր անշարժ և շարժական տօնե-
րը այն կարգով, ինչ ընթացքով որ ընդհան-
րապէս դոքա տօնուում են տարուան մէջ. տե-
ղափոխուող տօներն էլ դրած են այն տեղե-
րում, ուր նոքա գլխաւորապէս տօնուում
են: Սոյն առաջին հատորը մանրամասնաբար
ցոյց է տալիս, թէ որ տօնին ինչ ընթերց-
մունքներ, երգեր, շարականներ են գործ ած-
ուում և որպիսի արարողութիւններով ու ծէ-
սերով: Այնպէս որ միանգամ գիտենալով թէ
որեւիցէ օրը ինչ տօն է՝ մենք այդ տօնի կա-
տարման ամենայն պարագաները գտնում ենք
առաջին հատորի մէջ իւր տեղում:

բ. Իսկ երկրորդ հատորը, որ ասուում է
նաև քանոն և կառավարիչ առաջին հատո-
րին, ղեկավարում է առաջին հատորը: Վա
36 աղիւսակ է մեր 36 տառերի թուով, որ
ցոյց է տալիս թէ երբ տարեգիրը այս կամ
այն տառն է, որ շարժական տօները երբ,
այսինքն ամսի քանիսին են տօնուում, շաբա-
թապատների միջոց ուտիքները քանի՞ օր կամ
շաբաթ են, բարեկենդանները երբ են գալիս,
եկեղեցական ձայներից որը երբ է գործած-

ւում և այլ կարեւոր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են աստուածաշարութեան համար: Ուրեմն առաջին հատորը իսկապէս բացատրութիւն և շարունակութիւն է երկրորդ հատորին և գիտենալով տարուան տարեգիրը՝ դորանով մենք գիտենք արդէն — տարուան բոլոր տօնակատարութիւնները իւր բոլոր մանրամասնութիւններով: Մեզ հարկաւոր է ուրեմն իմանալ միայն երկրորդ հատորի կազմութիւնը, որովհետեւ նա է բանալին առաջին հատորի:

Նախքան տօնացուցի երկրորդ հատորի կազմութիւնը իմանալը՝ պէտք է գիտենանք տօների և պատերի տեսակները և միջոց ու տիքների որքանութիւնը, որոնց կարգաւորութիւնը ցոյց է տալիս տօնացուցը:

Ա. Տ օ ն ե ռ ը:

Տօները երկու տեսակ են, անշարժ և շարժական:

Անշարժ այն տօներն են, որոնք ամեն տարի միշտ միևնոյն ամսի միևնոյն օրն են հանդիպում. դոքա հետևեալներն են. —

ա. Յունուար 5 ձրագալոյց ծննդ. Քրիստոսի.

բ. » 6 Աստուածայայտնութիւն.

գ. » 7 Մեռելոց.

դ. » 8, 9, 10, 11 և 12 օրերը.

ե. » 13 Անուանակոչութիւն Քրիստոսի.

զ. Փետր. 14 Տեառնընդառաջ.

է. Ապրիլ 7 Աւետումն ս. Աստուածածնի.

ը. Սեպտեմբ. 8 Ծնունդ ս. Աստուածածնի ի Սննայէ.

թ. Նոյեմբեր 21 Ընծայումն ս. Աստուածածնի ի տաճարն.

ժ. Դեկտեմբեր 9 Յղութիւն ս. Աստուածածնի ի Սննայէ.

Շարժական այն տօներն են, որոնք Զատիկի տօնի հետ յետ ու առաջ են շարժւում, որոնց երբ տօնուիլը ցոյց է տալիս երկրորդ հատորը, և դոքա են մնացեալ բոլոր տօները:

Շարժական տօները թէպէտև իւրաքանչիւր տարի նայելով Զատիկի տօնին այլ և այլ ամսին են պատահում. բայց այսքանը հաստատ է, որ դոքա որոշեալ կարգով են միմեանց յաջորդում. օրինակ եթէ գիտենք, թէ որեւէ տարին առաջաւորաց պահքը երբ է լինում՝ գիտենք նաև որ երկու շաբաթ յայտնի սրբոց տօները տօնելուց յետոյ բուն բարեկենդան է, սորա լիսներորդ օրը Զատիկ է, վերջինս քառասներորդ օրը Համբարձումն է, տասն օրից յետ Հոգեգալուստ և այլն:

Բայց կան շարժական տօներ, որոնք մի-
ևնոյն ժամանակ և տեղափոխուող են, այս-
ինքն չեն տօնուում որոշեալ կարգով, այլ նա-
յելով Զատիկի տօնին՝ երբեմն սորանից առաջ
են տօնուում և երբեմն յետոյ: Դոքա հետե-
ւեալներն.

ա. Ծնունդից յետ տօնուող 11 տօները,
որոնք տօնացուցի մէջ ապայից տօներ են
կոչուում, որովհետեւ, յաջորդաբար տօնուելու
պատճառով իւրաքանչիւրի սկզբում կրկնուում
է «ապա տօն . . » բառերը:

բ. Վարդավառի և Աստուածածնի վերա-
փոխման միջոցում տօնուող երկու շաբաթուայ
տօները:

Եւ գ. Վերափոխումից յետ չորրորդ շա-
բաթուայ երկու տօները, այն է Անդրէ զօ-
րավարի և Անդրիանոսի տօները և բոլորից
վերջի երկու տօնը, այն է Աբրահամու և Խո-
րէնի, և Աստուածատուր վկայի (Իզտբուզտ)
տօները:

Բ. Պ ա ս ն ը ը.

Բացի չորեքշաբթի և ուրբաթ օրերից,
որոնցից առաջինը ի պատիւ Աւետեաց Աս-

տուածամօր *), իսկ երկրորդը իբրեւ յիշատակ
Յիսուսի խաչելութեան միշտ պահում ենք
առանց սրբոց տօնակատարութեանց՝ Հայաս-
տանեայց սուրբ եկեղեցին սահմանադրած ունի
հետեւեալ պահերը.

ա. Դեկտեմբերի 30-ից մինչև յունուարի
5-ը ի պատիւ Քրիստոսի ծննդեան, և այդ
ժամանակ տօներ չեն տօնուում, բացի ս. Բար-
սեղ Հայրապետի և նորա հետ տօնուող սրբ-
երի տօնից, որ կատարուում է պահոց շա-
բաթ օրը և այն ո՛չ միշտ:

բ. Առաջաւորաց պահք—5 օր. չորս օր
առաջ տօների, իսկ ուրբաթ՝ Յովնան մարգա-
րէի յիշատակ:

գ. Քառասնորդական կամ մեծ պահք.
որոնցից իւրաքանչիւր շաբաթ սրբոց տօներ
են կատարուում, իսկ կիւրակները յիշատակ են՝

Երկրորդ կիւրակի — Արտաքսման.

Երրորդ » — Անառակին.

Չորրորդ » — Տնտեսին.

Հինգերորդ » — Դատաւորին.

Վեցերորդ » — Գալստեան.

Եօթներորդ » — Ծաղկազարդ.

դ. Եղիական պահք—5 օր, Հոգեգալըս-

*) Ինչպէս երգում է եկեղեցին «ի չորրորդ
օր դարձեալ հրեշտակն ետ զաւետիսն կուսական»:

տեան Տէրունական տօներով, ըստ կարգա-
դրութեան Շնորհալույն:

Ե. Լուսաւորչի պահք—5 օր, երեքը
սրբոց տօներով:

զ. Վարդավառի պահք—5 օր, առանց
տօների:

է. Ս. Աստուածածնի վերափոխման պահք
—5 օր, առանց տօների:

ը. Ս. Խաչի վերացման պահք—5 օր, ա-
ռանց տօների:

թ. Վարդապայ ս. Խաչի պահք—5 օր,
երեքը սրբոց տօներով:

ժ. Յիսնակաց պահք—5 օր, առանց տօ-
ների:

ժա Ս. Յակովբի պահք—5 օր, երեքը
սրբոց տօներով:

ժբ. Աստուածայայտնութեան, Յարու-
թեան, Վարդավառի, Վերափոխման և ս. Խա-
չի վերացման պատեր կոչուում են նաւակա-
տեաց պատեր և այդ պատերին--Աստուածա-
յայտնութեան ճրագալուցի օրն ու միւս պա-
տերի շաբաթ օրերը մեր Եկեղեցին արգելած
է մսի գործածութիւնը հրէաներից որոշուելու
համար, որոնք այդ օրերը զոհ էին անում:

Գ. Միջոց ուտիքներ:

Մենք գիտենք, որ տօները շարժուում են
տարուայ ընթացքում՝ ուրեմն շարժուում են
նաև շաբաթապահքերի միջոց ուտիքները,
տօնուում են այդ տօները. և նայելով թէ
Ձատկի տօնը վաղ է գալիս թէ ուշ՝ միջոց
ուտիքներն էլ երկար են տևում կամ կարճ:

Միջոց ուտիքները, որոնց տևողութիւ-
նը փոփոխուում է, հետևեալներն են. —

ա. Յայտնութեան միջոց ուտիք, այսինքն
այն միջոցը, որ լինում է Աստուածայայտնու-
թեան տօնից մինչև առաջաւորաց բարեկեն-
դանը և դա տևում է 6—41 օր:

բ. Վարդավառի և Աստուածածնի Վե-
րափոխման միջոց ուտիքը. դա լինում է մէ-
կից մինչև վեց շաբաթ:

գ. Աստուածածնի և ս. Խաչի միջոց ու-
տիքը. լինում է երեք կամ չորս շաբաթ:

դ. Վարդապայ Խաչից մինչև Յիսնակաց
բարեկենդանը միջոց ուտիքը (որ կոչուում է
նաև «եօթն շաբաթներ» միջոց՝ տարուայ մէջ
բացի դորանից ուրիշ 7 շաբաթ ուտիք չըլի-
նելու պատճառով). լինում է 7 կամ 8 շա-
բաթ:

Եւ Ե. ս. Յակովբի տօնից մինչեւ ծննդեան պահքը միջոց ուտիքը, որ տեւում է 12-ից մինչեւ 18 օր:

Իսկ միւս միջոց ուտիքները միշտ անփոփոխ են, այն է՝

ա. Սուրբ Սարգսի տօնից 2 շաբաթ անց բուն բարեկենդան է:

ը. Զատիկից 40 օր անց Համբարձումն է:

զ. Համբարձումից 10 օր անց Հոգեգալուստ է և այդ օրը բարեկենդան է Եղիական պահոց:

դ. Եղիական պահքից յետոյ 2 շաբաթ ուտիք է և ապա ս. Լուսաւորչի բարեկենդան:

ե. Ս. Լուսաւորչի տօնից 2 շաբաթ անց Վարդավառի բարեկենդան է:

զ. Ս. Խաչից մի շաբաթ անց Վարագայ խաչի բարեկենդան է:

է. Յիսնակամտից մինչեւ ս. Յակովբի բարեկենդանը երկու շաբաթ ուտիք է:

Պէտք է գիտենալ նաև, որ

Ա. Ս. Աստուածածնի վերափոխման տօնի բուն օրն է Օգոստոսի 15-ը. բայց որովհետեւ այդ տօնը միշտ կատարւում է կիւրակի օրը, վասնորոյ վերցնում ենք երկու կողմից մօտաւոր կիւրակիները—երեք օր առաջ,

երեք օր յետոյ՝ Օգոստոսի 12—18 և այդ 7 օրուայ ընթացքում պատահող կիւրակի օրը տօնւում է Վերափոխումը, երբեք ոչ յետ և ոչ առաջ: Ուրիշ եկեղեցիք Վերափոխումը տօնում են օգոստոսի 15-ին, որ օրն էլ դա հանդիպի:

Բ. Ս. Խաչի վերացման տօնի բուն օրն է Սեպտեմբերի 14-ը. բայց միևնոյն կերպով կիւրակի օրը տօնելու համար՝ վերցնում ենք երկու կողմի մօտաւոր կիւրակիները—երեք օր առաջ, երեք օր յետոյ—Սեպտեմբերի 11—17 և այդ 7 օրուայ ընթացքում պատահող կիւրակի օրը տօնւում է ս. Խաչի Վերացումը, ոչ յետ և ոչ առաջ: Ուրիշ եկեղեցիք խաչվեացը տօնում են ճիշտ Սեպտեմբերի 14-ին:

Գ. Յիսնակի բարեկենդանի բուն օրն է Նոյեմբերի 18-ը, որովհետեւ այդ օրից մինչեւ Յունուարի 6-ը ճիշտ 50 օր է, որ է Աստուածայայտնութեան յիսնակը. բայց որովհետեւ Հայաստանեայց եկեղեցին Յիսնակին շաբաթապահ է սահմանած, վասնորոյ վերցրած է երկու կողմի մօտաւոր կիւրակիները—երեք օր առաջ և երեք օր յետ—Նոյեմբերի 15-ից մինչեւ 21 և այդ եօթնեկի ընթացքում ընկնող կիւրակի օրը լինում է Յիսնակի բարեկենդանը:

Դ. Տօնացուցի ամբողջութիւնը:

Ուրեմն մենք ունինք այժմ տօնացուցի գլխաւոր հիմունքը—հաստատուն կէտերը, այն է՝

1. Յունւ. 6-ը—Աստուածայայտնութիւն:

2. Զատիկը, ուրեմն նաև բուն բարեկենդանը և Առաջաւորաց բարեկենդանը և Զատիկից մինչև Վարդավառ եղած ժամանակը

3. Աստուածածնի Վերափոխման տօնի ժամանակը:

4. Սուրբ խաչի վերացման տօնը և այդտեղից մինչև Վարագայ խաչը եղած ժամանակը:

5. Յիսնակի բարեկենդանի և այդտեղից մինչև ս. Յակովբի տօնը եղած ժամանակը:

6. Եւ վերջապէս՝ Ծննդեան սլահքի բարեկենդանը, որ է Դեկտեմբերի 30-ին:

Գիտենալով գլխաւորապէս. թէ Ա. տարեգիր եղած տարին Զատիկի տօնը Մարտի 22-ին է կատարուում, մենք Զատիկից առաջ և յետոյ այդ տօները դասաւորելով իւրաքանչիւրը իւր տեղում, մնացեալ դատարկ միջոցներում դրուում են և տօնուում որոշեալ սրբերի տօները:

Նոյն ձևով ենք վարուում նաև հետեւալ տարեգիրների տօնացոյցը կազմելիս, միայն որովհետև իւրաքանչիւր տառից յետոյ մի օրով յետաձգվում է Զատիկի տօնը, ուրեմն և Զատիկից առաջ միջոցն աւելանում է, իսկ Զատիկից յետ պակասում, ուստի և տեղափոխուող տօներից ոմանք, նայելով թէ որքան օր է սկզբից աւելանում և վերջից պակասում, տեղափոխուում են առաջ՝ աւելացած օրերին տօնուելու համար:

Այս ձևով կազմում ենք ամբողջ տօնացոյցը 36 գրերի վերայ: Իսկ այդ գրերի գործածութիւնը մենք արդէն գիտենք մշտնջենաւոր 532 ամեայ շրջանից:

Ե. Շարժական, տէրունական եւ այլ տօնների օրերը գտնելու կանոնները:

1. Առաջաւորաց բարեկենդան: Երբ տարեգիրը Ա. է, ուրեմն և Զատիկը Մարտի 22-ին, Առաջաւորաց բարեկենդանը գալիս է Յունուարի 11-ին և այդպէս Զատիկը իւրաքանչիւր հետեւալ տարեգրին մի մի օր յետ ընկնելով՝ նորա հետ առաջաւորաց բարեկենդանն էլ մի մի օր յետ է ընկնում. ուրեմն շատ բնական է, որ Յունուարի 10-ին եթէ

տարեգիրն աւելացնենք, վերջին օրը կըլինի Առաջաւորաց բարեկենդանը:

Միւսնոյն հաշուով՝

2. Փետրուարի մէկից տարեգրի թիւը հաշուելով՝ գտնում ենք ըուն բարեկենդանը:

3. Մարտի 21-ին տարեգրի թիւը աւելացնել՝ Զատիկի տօն է:

4. Ապրիլի 18-ի տարեգրի թիւը աւելացնել՝ Շրեւման Խաչ է:

5. Ապրիլի 29-ին տարեգրի թիւն աւելացնել՝ Համբարձումն է:

6. Մայիսի 9 ին տարեգրի թիւն աւելացնել՝ Հոգեգայումն է:

7. Մայիսի 30-ին տարեգրի թիւն աւելացնել՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի բարեկենդանըն է:

8. Յունիսի 27-ին տարեգրի թիւն աւելացնել՝ Վարդավառ է:

9. Որովհետեւ երբ Ա տառը տարեգրի էր՝ վերափոխման տօնը Օգոստոսի 16-ին էր, ուրեմն և իւր շրջանից (Օգոստոսի 12 — 18) չորս տարի յետոյ՝ ուստի տարեգրի թուին 4 աւելացնելով՝ ստացած թիւը 7-ի ենք բաժանում, մնացորդը ցոյց է տալիս, թէ իւր շրջանի որ օրն է գալիս վերափոխումը:

10 Միւսնոյն պատճառով տարեգրի թուի վերայ աւելացնում ենք 2 և ստացածը եօթի բաժանում, և մնացորդը ցոյց է տալիս, թէ իւր շրջանի (Սեպտեմբերի 11—17) որ օրն է պատահում Ս. Խաչի տօնը:

Զ. Կիրակի պահելու օրեր.

Հայոց եկեղեցու Հայրապետների սահմանադրութեամբ բացի բնական կիրակի օրերից՝ որոշուած են կիրակի համարել նաև հետեւեալ օրերը տարուայ մէջ.

1. Յունուարի 6 և 7. Քրիստոսի Ծննդեան ա. և ք. (մեռելոց) օրերը.

2. Յունուարի 13. ութերորդ օրը—Անուանակոչութեան Տեառն:

3. Փետրուարի 14. Տեառնընդառաջ:

4. Շարժական . Ս. Վարդանանց զօրավարների տօնը

5. Շարժական . Աւագ Հինգշաբթի:

6. » . Զատիկի երկուշաբթի

(մեռելոց) և երեքշաբթի օրերը:

7. Ապրիլ . Աւետումն ս. Կուսին:

8. Շարժական . Համբարձումն Քրիստոսի:

9. » . Ս. Գրիգոր Լուսաւորչի երեք տօները:

10. » . Վարդավառի; Աստուածածնի և Խաչվերացի երկուշաբթի օրերը (մեռելոց):

11. Ս. Աստուածածնի երեք տօները. —

ա. Սեպտեմբերի 8 — Ծննդեան.

բ. Նոյեմբերի 21 — Երկր ամաց ընծայման.

գ. Դեկտեմբերի 9 — Յղուծիւն.

12. Շարժական . Հրեշտակապետաց տօնը:

13. » . Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնը:

14. » . Ս. Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ:

15. » . Ս. Թադէոս առաքելոյ և Սանդուխտ կուսի տօնը:

Է. Եկեղեցական ծայները.

Հայաստանեայց ս. Եկեղեցու արարողութիւնը կանոնաւոր կերպով կատարելու համար մեր շարական երգող սուրբ հայրերը ութըն ձայների բաժանեցին շարականները. այդ ձայների համաձայն վարում ենք նաև բոլոր եկեղեցական երգերն ու ընթերցմունքները: Զայները սոքա են.

Առաջին ձայն — աճ.	Երրորդ ձայն — զճ.
Առաջին կողմ — ալ.	Վառ ձայն — զլ.
Երկրորդ ձայն — քճ.	Զորրորդ ձայն — ղճ.
Աւագ կողմ — քլ.	Վերջ ձայն — ղլ.

Այս ձայները մեծ պասի երկուշաբթի օրից սկսած յաջորդաբար գործ ենք դնում մինչև հետևեալ բուն բարեկենդանը. բուն բարեկենդանի օրը ինչ ձայն էլ որ լինի՝ փոխում ենք վերջ ձայն և մեծ պասի երկուշաբթի օրուանից դարձեալ նոյն կարգով շարունակում: Այս հաշուով Զատիկի օրը միշտ աճ. է լինում:

Եկեղեցում ժամերգութիւնը լինում է դասէդաս, աւագանի կողմը կոչւում է աջակողմեան դաս, իսկ միւսը՝ ձախակողմեան: Բուն ձայները մի տարի աջակողմեան դասին են պատկանում, միւս տարի ձախակողմեան: Բուն ձայները որ դասին որ պատկանին՝ նոցա է պատկանում եկեղեցական երգեցողութեան մի որոշեալ մասի սկսելը: Ուստի և մի դասը մի օր ձայն պիտի վարէ և միւս դասը՝ կողմ, և այդպէս փոխէփոխ պիտի շարունակուի:

Զայն վարող դասը կոչւում է աւագ երիցու դաս, որովհետև աղօթքները այն դասի քահանան է ասում. և քարոզները միւս դասի սարկաւազը, իսկ այն դասը, որ հետևեալ օրը պիտի ձայն վարէ՝ կոչւում է աշակերտի դաս:

Ուրեմն կարևոր է գիտենալ, թէ ինչ եղանակով ենք իմանում թէ որ և է տարին բուն ձայները որ դասին են պատկանում:

Երբ որ Փրկչական թուականը գոյգ թիւ է լինում՝ բուն ձայները այդ տարին Աջակողմեան դասին են, իսկ կողմերը աջակերտի դասին. իսկ երբ անգոյգ է՝ դորա հակառակը:

Ը. Չայն գիւտ.

Եթէ ուզում ենք իմանալ թէ որ և իցէ որ ինչ ձայն է՝ այսպէս ենք գտնում.

Մենք գիտենք, որ մեծ պասի երկուշաբթի և Զատիկ օրերը միշտ աձ. է լինում. այդ երկուսի մէկից մինչև տուած օրը հաշուելով՝ ստացած թիւը բաժանում ենք 8-ի վերայ. մնացորդը ցոյց է տալիս թէ որ ձայնն է տուած օրը. եթէ 1 է աձ. է, եթէ 2՝ ալ. և այլն:

ԺԹ.

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ.

Ա. Հրամանի աւագ լրման աղիւսակ.

Վերադարձ.	Ա Վ Ի Ա Ե Ն Ր.	Աւագ լրման.
Բ.	Ապրիլի	13
Ժգ.		2
Իդ.	Մարտի	22
Ե.	Ապրիլի	10
Ժզ.	Մարտի	30
Իէ.	Ապրիլի	18
Ը.		7
Ժթ.	Մարտի	27
Լ.	Ապրիլի	15
Ժա.		4
Իբ.	Մարտի	24
դ.	Ապրիլի	12
Ժզ.		1
Իե.	Մարտի	21
դ.	Ապրիլի	9
Ժէ.	Մարտի	29
Իը.	Ապրիլի	17
Թ.		6
Իա.	Մարտի	25

Բ. Ամսի սկիզբը ցոյց տուող աղիւսակ.

Ե ո թ ն ե ր ե ա կ ն ե ր .

Աղիւսակ.	Ա.	Բ.	Գ.	Գ.	Ե.	Զ.	Է.
Յունուար. 31.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.	շբ.	կեր.
Փետրուար. 28	եշ.	ուր.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.
Մարտ. 31.	եշ.	ուր.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.
Ապրիլ. 30.	կեր.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.	շբ.
Մայիս. 31.	դշ.	դշ.	եշ.	ուր.	շբ.	կեր.	բշ.
Յունիս. 30.	ուր.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.	եշ.
Յուլիս. 31.	կեր.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.	շբ.
Օգոստոս. 31.	դշ.	եշ.	ուր.	շբ.	կեր.	բշ.	դշ.
Սեպտեմբեր. 30.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.
Հոկտեմբեր. 31.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.	շբ.	կեր.
Նոյեմբեր. 30.	եշ.	ուր.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.
Դեկտեմբեր. 31.	շբ.	կեր.	բշ.	դշ.	դշ.	եշ.	ուր.

Գ. Զատիկի — կիրակիների ցուցակը.

Ե ո թ ն ե ր ե ա կ ն ե ր .

	Է.	Զ.	Ե.	Գ.	Գ.	Բ.	Ա.
Իա.	իդ.	իէ.	իը.	իթ.	լ.	լա.	1
բ.	16	17	18	19	20	14	15
ժգ.	9	3	4	5	6	7	8
Իգ.	իդ.	իէ.	իը.	իթ.	իգ.	իդ.	իե.
ե.	16	17	11	12	13	14	15
ժդ.	2	3	4	5	6	լա.	1
իէ.	23	24	25	19	20	21	22
ը.	9	10	11	12	13	14	1
ժթ.	2	3	իը.	իթ.	լ.	լա.	1
լ.	16	17	18	19	20	21	22
ժա.	9	10	11	5	6	7	8
իբ.	իդ.	իէ.	իը.	իթ.	լ.	լա.	իե.
գ.	16	17	18	19	13	14	15
ժգ.	2	3	4	5	6	7	8
իե.	իդ.	իէ.	իը.	իբ.	իգ.	իդ.	իե.
դ.	16	10	11	12	13	14	15
ժէ.	2	3	4	5	լ.	լա.	1
իը.	23	24	18	19	20	21	22
թ.	9	10	11	12	13	7	8

Դ. Չայնգիւտի աղիւսակ.

	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	Տարեգիրներ,											
	թ	ժ	ե	լ	խ	ծ	կ	հ												
	ձ	ղ	ճ	մ	յ	շ	ն	ու												
	չ	պ	ջ	ռ																
Փետրվար	7	6	5	4	3	2	1	8												
Մարտ	3	2	1	8	7	6	5	4	7	6	5	4	3	2	1					
Ապրիլ	2	1	8	7	6	5	4	3	6	3	4	3	2	1	8					
Մայիս	8	7	6	5	4	3	2	1	4	5	2	1	8	7	6					
Յունիս	7	6	5	4	3	2	1	8	3	2	1	8	7	6	5					
Յուլիս	5	4	3	2	1	8	7	6	1	8	7	6	5	4	3					
Օգոստոս	4	3	2	1	8	7	6	5	8	7	6	5	4	3	2					
Սեպտ.	3	2	1	8	7	6	5	4	7	6	5	4	3	2	1					
Հոկտ.	1	8	7	6	5	4	3	2	5	4	3	2	1	8	7					
Նոյեմբ.	8	7	8	5	4	3	2	1	4	3	2	1	8	7	6					
Դեկտ.	6	5	4	3	2	1	8	7	2	1	8	7	6	5	4					
Յունվար	5	4	3	2	1	8	7	6	1	8	7	6	5	4	3					
Փետրվար	4	3	2	1	8	7	6	5	8	7	6	5	4	3	2					
Մարտ									7	6	5	4	3	2	1					

Այս աղիւսակով այսպէս ենք գտնում ձայնը. վերցնում ենք ամսի եւ տարեգրի ուղղութեամբ հանդիպած թիւը, աւելացնում նորա վերայ տուած թիւը ամսի, գումարը 8-ի բաժանում. մնացորդը ցոյց է տալիս թէ ինչ ձայն է, եթէ 1 է մնում Ա2. է, 2՝ ԱԿ. եւ այլն:

Օր. կամենում ենք իմանալ թէ մարտի 8-ին ինչ ձայն է. վերոգրեալ խրատի համաձայն 1890 թ. Ի տարեգրի ուղղութեամբ կգտնենք Մարտի 1 թիւ, որի վերայ եթէ աւելացնենք Մարտի 8-ը, գումարը կլինի 9. եթէ բաժանենք 8-ի մնացորդ կլինի 1, որ է Ա2. մարտի 8-ին:

Այս աղբւանակի ճակատի տողը վերադիրներն են, ցանցի իւրաքանչիւր խորանուծ երկու կարգ տառեր կան. վերևի կարգը եօթներեակն է. իսկ ներքևինը՝ տարեգիրը:

Փրկչակ. թոռակ.	Հայրց թոռակ.	ԻԱ	Բ	ՃԳ	ԻԳ	Ե	ՃՁ	ԻԷ	Ը	ՃԹ	Լ	ՃԱ	ԻԲ	Գ	ՃԳ	ԻԵ	Ձ	ՃԷ	ԻԸ	Թ
1616	ուկե	աբ իթ	դ վ	դ կ	ե հ	զե ջ	ա ի	բ ա	դ ա	դե բ	զ ջ	հ ճ	ա դ	բդ ոչ	դ կ	ե հ	զ ճ	հա բ	բ ա	դ
1635	ուչդ	դ բ	եզ ոչ	հ ճ	ա դ	բ ո	ե փ	ե փ	զ ճ	հ լ	աբ լա	դ հ	դ բ	ե ա	զե իւ	ա դ	բ ո	դե աւ	դե աւ	զ
1654	ուճդ	հ ե	ա հ	բդ չ	դ դ	ե ի	զ լ	բ ո	դ թ	դ թ	դ ա	եզ իւ	հ ե	ա հ	բ չ	դդ բա	ե ի	դե իւ	հ ա	աբ ոչ
1673	ուճիբ	դ թ	դ ա	ե ճ	զե զե	ա հ	զ թ	դ ի	զ իւ	զ իւ	հ ա	ա դ	բդ թ	դ ա	ե ճ	զ դ	հա աւ	բ թ	դ ի	դ ն
1692	ուճիւա	եզ եզ	հ ա	ա դ	բ դ	բ դ	զ լ	դ ի	աբ իթ	աբ իթ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	դ ա	դե իւ	զ լ	հ ճ
1711	ուճկ	ա ի	բդ աւ	դ կ	ե հ	զ լ	բ ա	բ ա	դ ա	դ ա	եզ իւ	հ ճ	ա դ	բ ո	դ ի	բ դ	զ ճ	հա իւ	աբ լա	դ ն
1730	ուճհթ	դ թ	ե ա	զե ճ	ա դ	բ ո	զ թ	դ ի	զ իւ	զ իւ	հ ա	ա դ	բդ թ	դ ա	ե ճ	զ դ	հա աւ	բ թ	դ ի	եզ իւ
1749	ուճղը	հ ե	ա հ	բ ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1768	ուճթե	բդ թ	դ ա	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1787	ուճլզ	հ ի	զե իւ	ա դ	բ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1806	ուճեե	ա ի	բ ո	զե իւ	ա դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1825	ուճհդ	դ թ	ե ա	զե իւ	ա դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1844	ուճղդ	զե զե	ա հ	բ ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1863	ուճթբ	բ թ	զդ իւ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1882	ուճլա	հ ի	զ լ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1901	ուճ	ա ի	բ ո	զե իւ	ա դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1920	ուճիթ	դդ թ	ե ա	զե իւ	ա դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1939	ուճլը	զ զ	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1958	ուճե	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1977	ուճիզ	ե ի	զ լ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
1996	ուճիւե	հա իւ	բ ո	զե իւ	ա դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2015	ուճիդ	դ թ	դե աւ	զ իւ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2034	ուճնդ	զ զ	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2053	ուճբ	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2072	ուճլա	դե բ	զ լ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2091	ուճլա	հ ե	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2110	ուճիթ	դ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	եզ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ
2129	ուճլը	զ զ	բ թ	բ թ	ե ճ	զ դ	բ դ	զ թ	դ ի	աբ իւ	դ ի	դ ի	ե հ	զե իւ	ա դ	բ դ	զ ճ	դե իւ	դ ի	եզ իւ

- 13 Դօն Քիշօտ լամանչեցի Մ. Սէրվանտէսի
1878 (սպառուած) — 70
- 14 Գէորգ Ռօլլէստօն, վէպ 1879 . . . — 60
- 15 Երրորդ ոսկի, առակ Լակիգէի (պարգևա-
տրուած Ս. Պ. Փրէօրելեան ընկ. կող-
մից) Բ. տպ. 1893 — 10
- 16 Ռօբինզօն (հրատ. Թիֆլիսի տպագր.
ընկերութեան) 1881 — 60
- 17 Չէստէրտօնի ժառանգը, պատկ. 1882 1 —
- 18 Ակտէա, տ. Սիսոնվայի 1885 . . . — 50
- 19 Էան Էրնստ Սմօլեար Ն. Էանչուկի 1885 — 20
- 20 Արծուի մտածմունքը, պրոֆ. Մ. Բոդ-
դանովի 1892 — 05
- 21 Գիւղիսուրբը. Սվետոպօլկ 2էխի, 1892 — 10
- 22 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի 1893 1 —

Պ.

Հրատարակութիւնները.

- 1 Իս. Յարութեան. Հայոց գիրը 1893 1 50
- 2 Իշխ. Կ. Բեհչբութեան. Ծուխ 1893 — 15
- 3 Ռանգաբէ. Էմաէ. վէպ. Թարգմանու-
թիւն Յ. Լալայեանց 1893 . . . — 25
- 4 Ալբեր Այնօ. Քուրդի լեան. Թարգ.
1894 — 25
5. Ճաղարեգեան Յ., Հայոց լեզու. ա. տ.
գասագիրը Հայ. ծխ. դպր. համար — 30

Պ.

Մեզ մօտ է ստորոջը պահեստը հետեւեալ գրքերի.

- 1 Խուլ Խաչիկ, պատմական վէպիկ Քամա-
լեանց Ս. 1894 — 25

- 58
- 2 Փերիզադէի երգը. Փոքր Ասիայի կեանքից, թարգմ. Յ. Լալայեանց 1894 — 25
 - 3 Ղարիբ Մշեցի. պատկեր տաճկահայերի ներկայ կեանքից 1894 . . . — 10
 - 4 Հուքսէւ. Տարերք բնական գիտութեանց, թարգմ. Իս. Յարութիւնեանց 1894
օժանդակ ձեռնարկ հայ դպր. համար — 40

ԲԱՅՈՒՆԺ. Է ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Դ Ի Ի Ա Ն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺԱՂՈՎԱԾՈՒՐ

Դ. եւ Ե. գրքերի համար, որոնք կը պարտաւանդեն խաղաթիւ պատմական գրագրութիւններ յիշեալ տարեթիւներէ:

Քրիստոսանչիւսի գիրքը բաղկացած է կիսի 12 մեծադիր թերթից:

Երկու գրքի բաժանորդագինն է 3 ռ.: Առաջին գիրքը մամուլի տակ կը մտնի հէնց որ բաժանորդներ թիւը 200-ի կը հասնի:

Ժամօթ.: Ա. Բ. եւ Գ. գրքերը տպուած են եւ արժեն 9 ռ. բոլոր 5 գրքերը ստանալ ցանկացողը վճարում է 10 ռ.:

Հասցեն. — Տփլիս, Գ. Ի. Տ. ԲԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ
Կարելի է գիմել և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ.

Հումով կտպուի Գիւտ բաճ. Աղանեանցի

«ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԺՊԱՀՏՈՒԹԵԱՆ»

Գառազիրը թեմական եւ ծխական դպրոցների համար

2847

2015

ՀՀ Ազգային գրադարան



NL0067116

